



(Ը. Տարի) ՅՈՒԼԻՍ 1932

(8<sup>me</sup> Année) Juillet 1932

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Խմբագրական

ԵԿԵՂԵՑԻՆ

Հոգ. Կեանք

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԹԷ ԶԱՆՈՂՈՒԹԻՒՆ

ԶԱՍՏՈՒԱԾ ՕԳՏԱԿԱԼԱՊԷՍ

ԿԸ ՃԱՆՁՆԱՆՔ ՄԻԱՅՆ

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍՈՎ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

II. Դրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ

Կենսագրական

ԿՈՄՍ ՅԻՆՑԻՆՏՈՐՅ

Դրանկանց սիւնակ

ԻՆՁ ԿՐԵԱՆ ԸՆԵԼ ՄԱՆՈՒԿԵՐ

Զանազան լուրեր

Ազատ Թարգմ. Ն. Մ.

Թրգ. ՅՈՎ.Զ. ԶԱՂԵՄԱՆ

Թրգ. Վ.Եր. Ն. ՓԱՓԱԶԵԱՆ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

X X X

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-  
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենաշնի,  
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը  
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ  
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը  
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ ռեանիւն  
ներկայացուցիւն ալ չճանչնար ո եւ է յարմարութիւն մը,  
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը  
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ  
կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողմէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,  
**Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ**

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին ծարգմանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան  
դիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-  
նատու խմբագիրն է՝

#### ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ հաւար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք  
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ  
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 13 Ֆրանք  
Արտասահման 20 Ֆրանք կամ 30 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք  
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ  
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք  
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են  
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ դրամական առա-  
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-  
կուքն ալ հետեւեալ հասցէով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արթնցի՛ր դուն  
որ կը քնանաս, եւ  
կանգնէ մեռելնե-  
րէն, ու Քրիստոս  
քեզի լոյս պիտի  
տայ:  
Եփես. Ե. 14

# ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ  
Անոր Կանգիտար մանկու խոստմանքէն որ մեզի մնացեր է,  
ձեզմէ մէկը գրկուած Գառնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-  
կէ քիչ մը ատենէն  
Ան որ գալու է՝  
պիտի գայ ու պի-  
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Հ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1932

ԹԻԻ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԵԿԵՂԵՑԻՆ

Բ.

Եկեղեցին... որ Անոր մարմինն է. Անոր Լըու-  
մը, որ կը Լեցնէ ամէնը ամէն բանի մէջ:

Եփես. Ա. 23

«Բանբեր»ի անցեալ թիւին մէջ շանք ըրինք  
համառօտակի բացատրել թէ ի՞նչ է եկեղեցին,  
նաեւ փորձեցինք քանի մը տողերով ներկայա-  
ցնել թէ ի՞նչ է եկեղեցին: Սխալ պիտի ըլլար  
եկեղեցին քանի մը բառերով սահմանել, կամ  
զանիկա այս կամ այն բառերով բացատրել կամ  
նկարագրել, վասնզի եկեղեցին Քրիստոսի լըու-  
մն է: Այս լըումը բացատրել եւ զայն մասնաւո-  
րել, զայն ճիշդաւորել ու անդամահատել կրնայ  
մասամբ ուղիղ ու նաեւ սխալ ըլլալ: Լըումը  
ըսելով ամէն ինչ իր մէջը բովանդակուած  
կը հասկնանք: Այս խոր արտայայտութեան ըն-  
դարձակօրէն անդրադառնալէ առաջ, ըսենք թէ  
Առաքեալներէն իւրաքանչիւրը եկեղեցին արտա-  
յայտելու համար տարբեր պատկերներ կը ներ-  
կայացնեն:

Պետրոս առաքեալ սոյն անտեսանելի իրա-  
կանութիւնը թանձրացեալ եւ մարդկային մտքին  
հասկնալի ընելու համար զայն կը կոչէ կենդա-  
նի քարերով շինուած տաճարը Ա. Պետ. Բ: Այս  
տաճարը անձեռագործ հաստատութիւն մըն է:  
Չայն կազմող իւրաքանչիւր կենդանի քար իրեն  
յատուկ տեղն ունի, որուն նպատակն է տաճա-  
րին շինութիւնը: Ամէն կենդանի քար իր տեղը  
գրաւելու է ուրիշները բռնելու, զանոնք կրելու,  
անոնցմէ կրուելու, իրենց պէսպիսութիւնովը զի-  
րար լրացնելու համար:

Պողոս առաքեալ երկու տարբեր նմանու-  
թիւններ կը գործածէ եկեղեցիին համար: Ա. Ա.

տուճոյ ընտանութիւնը: Ի՞նչ գեղեցիկ արտայայ-  
տութիւն: Ընտանիքին մէջ սքանչելի մտերմու-  
թիւն մը կը տիրէ: Աստուած այնքա՛ն մօտեցած է  
մարդկութեան որ երկնային ընտանիք մը հաս-  
տատած է երկրի վրայ ուր ամենասուրբ Երրոր-  
դութիւնը հաւատացեալներու միութեան մէջ կը  
դնէ Իր սրտի բոլոր բաղձանքներուն լրացումը:  
Հոն կը տիրէ աստուածային քաղցրութիւնը, եր-  
կայնմտութիւնն ու համբերութիւնը, աստուածա-  
յին սէրն ու խնդութիւնը եւ ժուժկալութիւնը: Հոն  
կայ կատարեալ ներդաշնակութիւն եղբայրնե-  
րու մէջ նաեւ կատարեալ հնազանդութիւն ու  
երախտագիտութիւն առ Աստուած: Հոն՝ Հօր Աս-  
տուծոյ սէրը ամէնքն ալ նոյն ուրախութիւնով  
ու սիրով կը լեցնէ: Քրիստոս Յիսուսի շնորհքը  
իւրաքանչիւրը իր մեղքերէն փրկած եւ զանոնք  
Աստուծոյ որդիներ ըրած է: Ս. Հոգիին մշտակայ  
հաղորդութիւնը զանոնք կը կառավարէ, կը լու-  
սաւորէ կը հաստատէ, կը մաքրէ, կը սրբէ եւ  
լոյսեր ըլլալու յաւիտենական գործունէութեան  
կը պատրաստէ:

Աստուծոյ ընտանութիւնը կը նշանակէ Աստ-  
ուած մարդոց մէջ: Անիկա անոնց մէջ կը բնա-  
կի, պիտի բնակի որպէս հայր մը իր զաւակնե-  
րուն մէջ: Այդ զաւակները ազատութեան կան-  
չուած են, ազատ սատանայական իշխանութեան  
սիստէմէն: Ազատ՝ օրէնքէն, վասնզի իրենց օրէն-  
քը քարետախտակներու վրայ գրուած յօդուած-  
ներով է, այլ ներքին մարդուն մէջ սրտի տախ-  
տակներուն վրայ: Ազատուած մահէն, վասնզի Աս-  
տուծոյ ընտանութիւնը մահուան յաղթող եւ զը-  
ժոխքին բանալիները Իր ձեռքն ունեցող ամէն  
իշխանութեան տէր եղող եւ յաւիտենական կեան-  
քը երեւան բերող Քրիստոսի միջոցաւ է:

Այս զարմանալի, երկնային կենդանի միութիւնն է եկեղեցին: Կեանք եւ սէր կը բղխէ Հօր-մէն եւ կը թափանցէ իւրաքանչիւր ազատ որդիին ու որդիներուն մէջ եւ հոն կը կազմէ նոյնանման ընդարձակ սէր մը որդիներուն մէջ առ Աստուած, առ զիրար: Անհատական սէր ո՛չ թէ հաւաքական եւ անձնականութենէ զուրկ, այլ որոշ արտայայտութեամբ, պէսպիսի, բայց համանման եւ սուրբ ու ներդաշնակ եւ միաբան: Մէկ մարմին ու մէկ հոգի: Տէրը մէկ, հաւատքը մէկ: Մէկ է Աստուած եւ ամենուն Հայրը որ ամենուն վրայ եւ ամենուն հետ եւ ամենուն մէջ է: Բայց Աստուծոյ նպատակը դեռ աւելի է եկեղեցիի մասին: Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը եկեղեցիին ձեռքով յայտնի կ'ըլլայ երկինքը եղող իշխանութիւններու ու պետութիւններու ինչպէս նաեւ երկրի վրայ եղող բոլոր ստեղծագործութեան: Եկեղեցին Քրիստոսի գիտակցութեան պաշտօնավարութիւնն է հոգեւոր ոյժերու դէմ(1) Այն վայրն է ուր Քրիստոս իր փառաւորութիւնովը կը բնակի: Այս պատճառաւ շիտակ է Պօղոս սրբազան առաքեալի երկրորդ արտայայտութիւնը որ կ'ըսէ թէ Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, Անոր լրումը: Այսինքն ի յաւիտենից ընտրուած այն կազմածը, որուն միջոցաւ խաչեալ, յարուցեալ, համբարձեալ Յիսուս Քրիստոս Ինքզինքը իր լեցունութիւնով պիտի

.....

(1) Ոչ թէ այն առումով, որով կը պնդէ պապականութիւնը իրաւունքն ունենալ կազմելու կառավարութեան աստուածայետական սիսթէմ մը: Եկեղեցին մէկ գլուխ ունի, որ է Քրիստոս եւ մէկ հեղինակութիւն քրիստոնէական կեանքի իրականութեան մէջ, որ է Աստուծոյ խօսքը որ կը լուսաբանուի հաւատացեալին մտքին մէջ Ս. Հոգիին լուսովը: Եկեղեցին ունի խիստ դժուար պայքար մը, երկարատեւ պատերազմ մը, որ ոչ թէ երկրային բաներու կամ մարմինի ու արեւնի հետ է, այլ իշխանութիւններու ու պետութիւններու եւ այս աշխարհին իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար ուժերուն հետ (Եփես. 2. 12): Եկեղեցին ո՛չ աշխարհային զինուորութիւն կը ճանչնայ ոչ ալ քաղաքականութիւն. մեր քաղաքականութիւնը երկինքն է: Յիսուս ըսաւ, «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ»: Եկեղեցին ազգայնականութիւնն ալ չճանչնար: Անիկա ազգային եկեղեցիներու սեղմ ու հեղցուցիչ մթնոլորտին մէջ չկրնար պարփակուիլ: Անիկա ամենապարփակ է եւ ազգայնականութեան բռնադրօսիկ մթնոլորտին մէջ գոյութենէ կը դադրի: Այնպէս որ անիրաւութիւն չէ ըսել թէ եկեղեցի ըլլալէ դադարած են այն տեղական «Եկեղեցի» կոչուողները, որոնց մէջ ոտնձգութիւն ըրին քաղաքական եւ ազգայնական շարժումներ: Եկեղեցին գեր-ազգային եւ գերմարդկային գոյութիւն մըն է:

յայտնէ, վասնզի այդ լեցունութիւնը միայն եւ միմիայն եկեղեցիին միջոցաւ յայտնի պիտի ըլլայ աշխարհի եւ տիեզերքի:

Արդ, եթէ եկեղեցիի զաղապարը ի յաւիտենից էր Աստուծոյ մտքին մէջ, անոր պաշտօնը տիեզերական է, անժամանակ եւ անմիջոց: Բոլոր բաները անոր մէջ կը պարփակուին վասնզի աւելիաւ Անոր լրումն է, Որ ամէնը կը լեցնէ ամէն բանի մէջ: Քանի որ այսքան սերտօրէն կապուած է եկեղեցին Քրիստոսի անձին հետ, անոր ծագումը, անոր բնութիւնը, անոր զօրութեան աղբիւրները, անոր գոյութիւնն ու կեանքը երկնային եւ տիեզերական են(1):

Ուրեմն ինչպէ՞ս կրնայ ըլլալ այս լեցունութիւնը, քանի որ անոր անդամները դեռ հասարակ մարդիկ են աշխարհի վրայ ապրող եւ նոյնիսկ տկարութիւններով լի: Դժուար հարց մըն է այս սակայն շատ կարեւոր եւ լուսաբանելի: Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Եղբայրներ, ես չեմ սեպեր որ բռներ եմ, ոչ թէ ես արդէն կատարեալ եղեր եմ, հապա ետեւէ ինկած եմ... նպատակը դիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վագեմ»: Ուրեմն եկեղեցիին կոչումը որոշ գիտենք. գիտենք նաեւ անոր ամէն մէկ անդամին դիրքը, բայց ինքը թէ՛ դեռ նիւթական, իր բոլոր կարողութիւններովն ու յատկութիւններովը, իր կամքովն ու խորհելակերպովը, զգացումներովը Սուրբ Հոգիին հոգատար ղեկավարութեան ու հսկողութեան տակ վերին բարձրագոյն նպատակին կը վագէ: Մեր լրումը միաբանական եւ դեռ պայմանական լըրում մըն է, որ հետզհետէ զարգացումով կ'աճի, մինչեւ որ Քրիստոսի մարմինը կատարեալ ըլլայ: Արդ, իւրաքանչիւր հաւատացեալի հայեցացակէտը, գործելակերպը միմիայն Քրիստոսի եւ Անոր եկեղեցիին հայեցակէտն ու գործելակերպը ըլլալով՝ այդ կատարելութեան կը ձգտի: Արդէն բուն իսկ այդ ամման ու յառաջգիմութեան մէջ են կատարելութեան արմատները: Եկեղեցին որպէս լրումը Քրիստոսի, զոր տեսանք մինչեւ հիմա, թերեւս հաւաքական եւ կրաւորական երեւի, այսու ամենայնիւ այդպէս չէ. անոր անդամներէն իւրաքանչիւրը ունի իր անձնականութիւնը եւ ազատ կամքը, որով նա եկեղեցիին նպատակը ի

.....

(1) Եկեղեցին Գառնուկին հարսն է, ամէն բարի բաներու բարձրագոյն գանձը, երկրի ու երկինքի Թագուհին: Ու դուռն ու ես, ձկ հաւատացեալ մասնաւոր նպատակ մը, նշանակութիւն մը եւ արժէք մը կը ներկայացնենք այդ մարմինին մէջ:

րագործելու համար իր բոլոր հոգեկան և մարմնական կարողութիւնները բարձրագոյն աստիճանի կը զարգացնէ եւ կը վարժեցնէ անոր ծառայելու համար (Եբր. Ե. 14):

Քանի որ եկեղեցին յաւիտեանական լրումն է Քրիստոսի և քանի որ մարդկութիւնը կանչուած է այդ եկեղեցիին անդամներ ըլլալու, ուստի ամէն մարդկային գործառնութիւն սուրբ ներշնչումով ըլլալու է, ամէն տեսանելի եւ անտեսանելի բաներ եւ խորհուրդներ, իրողութիւններ, դէպքեր, ամէն ինչ եկեղեցականանալու, սրբանալու է. մեր ապրելակերպը, մեր գործերը, մեր վաճառականութիւնը, արհեստները, գեղարուեստները, գիտութիւնը, ճարտարապետութիւնը, փիլիսոփայութիւնը, ամէն ինչ անոր սրբութեան եւ տիրապետութեան մէջ ընկղմելու է, որպէսզի Քրիստոս Ամէնը ըլլայ ամէն բանի մէջ: Ու մենք կ'ականակենք որ եկեղեցին շուտով Յիսուս Քրիստոսի կատարեալ լրութիւնը իր բարձրագոյն պայծառութեամբը շողացնէ բոլոր արարածներուն վրայ, վասնզի եկեղեցիին տիրապետութիւնը միայն մարդոց որդիներուն վրայ չսահմանափակուիր: Այդ ազդեցութեան տակ դալու են բոլոր ստեղծուածները, որոնք եռանդով Աստուծոյ որդիներուն յայտնուելուն կ'սպասեն, վասնզի ունայնութեան հնազանդեցան ստեղծուածները, այն յոսով որ ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծառայութենէն ազատուելով Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը հասնին: Կենդանիներ, թռչուններ, բնութիւնը, ամէն ինչ պիտի օրհնուի երգելու, գովելու, փառաբանելու զԱստուծո, աճելով, շատնալով, ճոռողումներով կամ լոին բայց խօսուն գեղեցկութեամբ, որուն մէջ հաւատոյ աչքերը կարենան տեսնել Աստուծոյ սքանչելի յայտնութիւնները (Սաղմոս ճնԸ): «Ամէն շունչ ունեցող թող Տէրը օրհնէ»: Երանի՜ թէ եկեղեցին իր տիեզերական տիրապետութեան խոր ազդեցութիւնը թափանցած ըլլար ամէն բանի մէջ եւ ամէն ինչ եկեղեցիին քաղցր բոյրովը համեմուած ամէն ինչ Աստուծոյ հաճելի եւ Անկէ փառաւորուած ըլլար շուտով: (Ամէն ինչ սուրբ ըլլար ինչպէս որ խոստացաւ):

Գիտենք թէ այս դիրքին հասնելու համար դեռ շատ բաներ կատարուելու են Աստուծոյ գաւակներուն մէջ սրբութեան ե նուիրման տեսակէտով: Բայց կ'ականակենք որ Քրիստոս շուտով ամէն ամէն բանի մէջ պիտի լեցնէ Իր մարմինին՝ եկեղեցիին միջոցաւ:

ՀՈԳ. ԿԵԱՆՔ  
.....

### ՅԱՁՈՂՈՒԹԻՒՆ ԹԷ ԶԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Չկա՞ն այսօր եկեղեցիներ որոնց միակ տեղեկագրութիւնն է, «Ամէն ինչ խաղաղ է ռազմաճակատին վրայ»: Ճակատամարտներ տեղի չեն ունենար, որովհետեւ թշնամիին վրայ յարձակում չկատարուէր: Եւ քանի որ եկեղեցին յաճախողները ժպիտով և քաղցրութեամբ, «Ուղաղութիւն, խաղաղութիւն» կը յայտարարեն, թշնամին կը ջանայ զանոնք կործանել:

Սակայն և այնպէս այս ընդհանուր թմբիրին մէջ արթնութեան մի քանի նշաններ ալ կան: Կղերականներս սկսած ենք խորհիլ թէ մեր քարոզները խեղճուկ եւ անազդեցիկ են, նոյնիսկ Բէնիթըրպլըրի արքեպիսկոպոսին նման զգուշաւոր եւ ողջամիտ մէկը պէտք զգաց աշխարհի յայտարարել այս ճշմարտութիւնը վերջին եկեղեցական ժողովին մէջ: Մեր մեծ գործն է քարոզել: Սակայն քարոզելու համար մենք ալ մեր Տէրոջը նման օծուելու եւ «վերէն զօրութիւն» առնելու ենք: Գուէյքըրներու ժողովներէն մէկուն մէջ ցաւ յայտնուեցաւ թէ շատ քիչ երիտասարդներ միայն իրենց կարողութիւնները Տէրոջը նուիրելով՝ Աստուծոյ գործին մէջ մտնելու կը փութան:

Նոյն աղաղակը կը լսուի Ամերիկայէն: Սան Յրանչիսկոյի մէջ գումարուած մեծ կրօնական ժողովի մը նախագահը գոչեց, «Շատ երախտապարտ պիտի ըլլանք ձեզմէ, եթէ Ամերիկայի համար բան մը ընէք, մեզի ղրկելով մէկը որ կարող ըլլայ քարոզել սորվեցնել: Մենք կորսնցուցած ենք քարոզելու զօրութիւնը եւ չենք կրնար քարոզել»:

Անկիւբքան եւ Սկովտիական եկեղեցիները այս դիտողութեան մասին խօսակցելով՝ համաձայնեցան թէ այսօրուան քարոզութեան մէջ պակաս եղածը՝ այն թախանձական շեշտն է որ ժողովուրդին սրտին կը դպչի եւ անոր կը ցուցնէ թէ քարոզիչը որքան կը տազնապի հոգիներու փրկութեան համար: «Ներկայ քարոզիչը իր ժողովուրդին համար չտազնապիր: Անիկա հանդարտօրէն եւ տրամաբանօրէն կը խօսի եւ բարոյագիտական հետաքրքրութիւն ցոյց կուտայ, սակայն երբեք չթախանցեր: Արդեօք Աստուծոյ Հոգին է որ կը խօսի այս պատգամներուն միջոցով:

Ամերիկա կ'աղաղակէ, «Մեզի մէկը ղրկեցէք որ քարոզել սորվեցնէ»: Սակայն Աստուծոյ ար-

դէն զրկած է մէկը, Սուրբ Հոգին: «Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք, ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք»:

Ընկեր քարոզիչներ, աշխարհականներ, աշխարհիկներ, մենք կենդանի Աստուծոյն դեսպաններն ենք, որպէս թէ Աստուած մեր միջոցով կ'աղաչէ մարդոց: Մենք Աստուծոյ զաւակներն ենք, Աստուծոյ որդիները, եւ եթէ որդիներ, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ եւ Բրիստոսի ժառանգակիցներ (Հռով. Ը. 17): Ի՞նչ սքանչելի իրողութիւն: Պօղոս այս յայտարարութիւնը կ'ընէ Սուրբ Հոգիին մասին գրած մեծ գլխուն մէջ: Արդեօք մենք մեր ժողովուրդին վրայ այս ազգեցութիւնը կը ձգե՞նք: Մեր պատգամները զօրութեամբ լեցո՞ւն են: Լման Բրիստոսը կը քարոզե՞նք: Կը քարոզե՞նք խաչը եւ քաջարար արիւնը: Մեր տուած պատգամը կենդանի՞ պատգամ մըն է:

Բրիստոս մեզի հետ եւ մեր մէջն է, յօժար եւ կարող է ամէն զօրութիւն մեզի տալու: Ինչո՞ւ մեր զօրութիւնը Անկէ չակնկալենք: Յովհաննէս Մկրտիչ իր մօրը որովայնէն Սուրբ Հոգիով լեցուած՝ նոյն պատգամը կ'ուղղէ մեզի, «Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ... Անիկա է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ» (Յովհ. Ա. 29-33): Մեր աչքերը Ամենակարող Տէր Աստուծոյն դարձնենք, որմէ խոստացուած է մեր օգնութիւնը, մեր զօրութիւնը:

Ո՞ւր են Աստուծոյ այն ծառաները որոնք կը յօժարին որ Աստուած զիրենք Ս. Հոգիով լեցուած քրիստոնեաներ ընէ: Անիկա կարող է եւ յօժար այս մասին որեւէ տարակոյս չունինք, բայց դարձեալ ետ կը կենանք:

Մեր աշխատութիւնը կրկնապատկելով այս հարցէն խոյս չտանք: Հմտութեան ու կազմակերպութեան ու գործի ծաւալման պակասը չէ որ կ'ողբանք: Բրիստոսի անունով երբեք այսքան գործ տեսնուած չէր անցեալին մէջ: Այսօր աւելի եկեղեցիներ, աւելի գործիչներ եւ աւելի զրամ ունինք, սակայն ասոնց ո՞րչափը Հոգիին զօրութեամբ կը գործածուին:

Օր մը մեր զաղափարները ո՞րչափ պիտի փոխուին: Տէրը ըսաւ, «Երբ ես բարձրանամ, ինծի պիտի քաշեմ»: Մեր պաշտօնավարութիւնը մարդիկ կը քաշէ: Եթէ չքաշեք, Բրիստոս բարձրացած չէ մեր գործին մէջ: Ժողովրդական քարոզիչները այսօր Բրիստոսի պահանջները ուրանալով զԱյն վար կ'իջեցնեն: Յանձնենք զանոնք չարչարեալ Փրկչին գթառատ շնորհքին եւ նայինք որ մենք միայն Բրիստոսը եւ Անոր խա-

չը քարոզենք: Աղօթենք մեր Տէրոջ զրպարտիչներուն համար: Եթէ Տարսօնցի Սօղոս, կրօնական բարձրաստիճան առաջնորդ մը, կրցաւ Բրիստոսի դառնալ, Անոր ո՞չ մէկ թշնամիէն կամ սուտ բարեկամէն կրնանք յոյսերնիս կտրել: Աստուած մեզի ներէ, եթէ յանդգնինք ուրիշները քննադատել:

Միայն մէկ մարդ կայ որու մասին ես խօսելու իրաւունք ունիմ: Ան՝ ժամանակ մը ինքզինքը ճշմարտութեամբ եւ անկեղծութեամբ յաջող կը նկատէր: Չէր հպարտանար իր յաջողութեան վրայ, բայց ուրախ էր: Թէպէտեւ մարդիկ դարձի կուգային Անոր քարոզութեամբ, սակայն անոնց դարձը միայն իր քարոզներուն չէր վերադրեր, այլ յաւէտ ուրիշներու շերմեռանդ աղօթքներուն: Յաջող էր, այո, սակայն Աստուծոյ մեղմ ու բարակ ձայնը օր մը անոր ալ հասաւ եւ անիկա ինքզինքը ոչ թէ յաջող, այլ խեղճ, աղքատ եւ կոյր տեսաւ: Բայց միեւնոյն ատեն անոր աչքերուն առջեւ ներկայացան նաեւ հոգեւոր զօրութեան եւ ճշմարիտ յաջողութեան կարելիութիւններ, քանզի նա ինքզինքը բացարձակապէս եւ կատարելապէս Բրիստոսի յանձնեց: Այդ օրունէ սկսեալ՝ անոր կեանքին մէջ յաջողութիւն երեւցաւ, երբ մարդիկ անոր միջոցաւ խաւարէն լոյսի փոխադրուեցան, եւ հաւատացեալներ հոգեւոր բարձրագոյն կեանքի մը հասան, վասնզի անիկա Սուրբ Հոգիին լուսովը տեսաւ թէ մարդկային յաջողութիւնը՝ Աստուծոյ «Աղէտալի ձախորդութիւն» մը կրնայ նկատուիլ:

Սուրբ Հոգին միայն կարող է այս կարգի փոփոխութիւն մը յառաջ բերել: Խեղճ եւ անկեալ մարդկութիւնը շատ գէշ կ'ազդուի եւ կը դազացուի ուրիշներու քննադատութենէն: Արդիականութեան հետեւող եկեղեցիներէն մէկին մէջ ունկնդիրներէն մէկը սաստիկ բարկացած՝ ձեռքի երգարանը երէցին վրայ նետեց՝ անոր երկարօրէն պարի վտանգներու մասին խօսելուն համար:

Այն մարդը որ ինքզինքը յաջող կը սեպէր, մինչեւ որ Աստուած իրեն սխալը ցուցուց՝ անցեալ օր միսիոնարի մը հանդիպեցաւ որ իրեն ըսաւ, «Կը յիշե՞ս ասկէ քսան տարի առաջ մեզի հետ գտնուիլը: Ի՞նչ սքանչելի փոփոխութիւն կրած է քու կեանքդ: Բացարձակապէս տարբեր մէկը կ'երեւիս հիմա»: Սակայն եթէ այդ Աստուծոյ սիրելի զաւակը քսան տարի առաջ իր հիւրը մէկդի առած եւ անոր սիրով ցուցնել ջանացած ըլլար թէ իր կենցաղովը Տէրը չէր փառա-

ւորեր, թերեւս իր հիւրը բարկանալով՝ ուրանար անոր ըսածը եւ զրպարտութիւն նկատէր: Բայց երբ Աստուծոյ Սուրբ Հոգին կ'սկսի մեզ դատապարտել, չենք կրնար չլռել եւ չխոնարհիլ: Յետադարձ ակնարկ մը նետելով՝ շատ անգամ կը հիանանք մեր գործակիցներուն վրայ՝ որ այնքան համբերող ու երկայնամիտ գտնուած են մեզի հանդէպ եւ կը զարմանանք որ Աստուած բարեհաճած է գործածել մեզի նման անարժաններ: Երանի՛ թէ ուրիշներ օգտուին այս կարգի փորձառութիւններէ եւ զգուշանան: Երանի՛ թէ մենք ալ փոխանակ քննադատելու ինքզինքնին յաջող նկատող ձախողները, սկսէինք անոնց համար աղօթել:

Գոհութիւն Աստուծոյ որ նոյնիսկ մեր ձախողութեան մէջ զմեզ կը գործածէ: Սակայն ցաւալի է որ չկրնար իր գործութեան հեղեղները մեր վրայ թափել: Նոյնիսկ մեր Սուրբ Հոգիով լեցուելէն առաջ՝ մեր քարոզութիւններով հոգիներ կը փրկէ, քանզի չուզեր որ ժողովուրդը բոլորովին տուժէ երէցին կամ քարոզչի չին պատճառով:

Ի՞նչ աղէտալի էր ժայռին քով Մովսէսի Աստուծոյ հրամանէն շեղիլը: Ժողովուրդը ջուրի կարօտ էր, Աստուած ըսաւ որ ժայռին խօսէր, սակայն Մովսէս ժողովուրդին տրտունջէն բարկացած՝ աղաղակեց, «Լսեցէք հիմա, ով ապշտամբներ, ձեզի այս ապառաժէն ջուր հանենք. եւ Մովսէս իր ձեռքը վերցուց, ու գաւազանովը երկու անգամ ապառաժին գարկաւ, եւ առատօրէն ջուր ելաւ, եւ ժողովուրդը ու անոնց անասունները խմեցին» (Թուոց Ի. 10, 11): Մովսէս հոս Աստուծոյ Հոգիին համաձայն չգործեց: Աստուծոյ անհնազանդ գտնուեցաւ եւ կարծես թէ ինքզինքը Աստուծոյ այս հօր գործին գործակից սեպեց՝ «Այս ապառաժէն ջուր հանենք»: Մովսէս հոս հպարտ գտնուեցաւ: Անիկա նաեւ կորսնցուց իր համբերութիւնը: Միթէ Աստուած կրնա՞յ այսպիսի մէկը գործածել: «Առատօրէն ջուր ելաւ», կ'ըսէ Աստուծոյ խօսքը: Այո, Աստուած չուզեց որ Մովսէսի մեղքին համար ժողովուրդը տուժէր: Սակայն ինք պատժուեցաւ, հակառակ բոլոր փափաքին՝ չկրցաւ խոստացեալ երկիրը մտնել:

Աստուած անշուշտ միշտ այսպէս չըներ: Եթէ չթողունք որ մեզ «Վերէն գորութեամբ լեցնէ», արգելք կ'ըլլանք անհամար հոգիներուն՝ մեր միջոցաւ օրհնուելուն: Ի՞նչ դժբաղդութիւն: Կը փափաքինք որ մեր սիրելիները, մեր Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները եւ մեր ժողո-

վուրդները ճշմարտապէս Բրիստոսի դառնան եւ Աստուծոյ ալ բաղձանքն է որ մեր միջոցով այսպէս ընէ, բայց չկրնար, եթէ գորութեամբ լեցուած քրիստոնեաներ չըլլանք: Որեւիցէ քրիստոնեայ որ Աստուծոյ ուզած տեղը կը գործէ, ձախողելու իրաւունք չունի:

Բոլոր անոնք որ Տէր Յիսուսի կը հետեւին, կրնան վայելել Անոր պարգեւած յաջողութիւնը եւ գոչել, «Իմ անձս Տէրջմով պիտի պարծի, խոնարհները պիտի լսեն եւ ուրախ ըլլան» (Սաղմ. ԼԴ. 2): «Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ եւ մենք ուրախացանք»:

## ԶԱՍՏՈՒԱԾ ՕԳՏԱԿԱՐԱՊԷՍ ԿԸ ՃԱՆՉՆԱՆՔ ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՎ

B. Pascal

Ամէն անոնք որ կը ձեռնարկեն Աստուածութիւնը ամբարիշտներուն ապացուցանել՝ սկսելով բնութեան գործերէն, շատ քիչ անգամ կը յաջողին: Չեմ յարձակիր այն հաստատուն ապացոյցներուն վրայ որոնք սրբադործուած են Ս. Գիրքերով: Անոնք բանականութեան համաձայն են, բայց յաճախ համեմատական չեն հոգեկան տրամադրութեանց ամէն անոնց՝ որոնց ուղղուած են:

Պէտք է ուշ դնել որ այս ճառերը չեն ուղղուիր անոնց որոնք եռանդուն հաւատք ունին իրենց սրտերուն մէջ եւ կը տեսնեն իսկոյն թէ ինչ որ կայ, ուրիշ բան չէ եթէ ոչ գործը Աստուծոյն զոր կը պաշտեն: Անոնց է որ բնութիւնը կը խօսի իր հեղինակին վրայ, եւ «Երկինք կը պատմէ Աստուծոյ փառքը» Սաղ. ԺԺ. 1: Անոնք, որոնց մէջ այս լոյսը մարած է եւ որոնք զրկուած են հաւատքէ ու սէրէ, միայն խաւար եւ մթութիւն կը գտնեն համայն բնութեան մէջ: Այս մեծ եւ կարեւոր նիւթին համար լուսնին ու մոլորակներուն կանոնաւոր շարժումները յիշել եւ կամ ուրիշ ապացոյցներ տալ բաւական չէ՝ զանոնք դարձնելու համար: Իրենց խստասրտութիւնը խլացուցած է զիրենք ու չեն լըսեր բնութեան ձայնը որ շարունակ կը հնչէ իրենց ականջներուն: Փորձառութիւնն ալ կը ցուցունէ թէ մէկզի թողելու է զանոնք այս միջոցով շահիլը: Ոչ մէկ բան կարող է զանոնք աւելի խրաչեցնել եւ առնել անոնցմէ ճշմարտութիւնը գտնելու յոյսը՝ քան թէ պահանջել որ համոզուին այս կերպ պատճառաբանութիւնով: Ս. Գիրքը որ մեզմէ լաւ կը ճանչնայ Աս-

տուեմոյ գործերը այսպէս չի խօսիր: Նա կ'ըսէ թէ եւ թէ ստեղծուածներուն գեղեցկութիւնը կը ցուցնէ հեղինակին ուժ ըլլալը, բայց չըսեր թէ նոյն ազդեցութիւնը կը թողու բոլորին վրայ ալ: Ս. Գիրքը կը ցուցնէ մանաւանդ թէ բնութիւնը չազդեր ինքն իր ուժովը, հապա այն լուսովը զոր Աստուած կը սփռէ անոնց էութեան մէջ՝ որոնց Անիկա կը յայտնուի այս միջոցաւ:

«Վասնզի Աստուծոյ վրայով գիտնալու բանը իրենց մէջ յայտնի է, որովհետեւ Աստուած անոնց յայտնեց» Հոով: Ա. 49: Ընդհանրապէս մեզ կ'ըսէ թէ Աստուած ծածկուած Աստուած մըն է, եւ բնութեան ապականութենէն ի վեր մարդկութիւնը ձգած է կուրուքեան մէջ, որմէ ազատում կարելի է գտնել միայն Յիսուս Քրիստոսով: Ասկէ դուրս Աստուծոյ հետ ոեւէ հաղորդակցութիւն անկարելի է: «Մէկը չճանչնար Հայրը, բայց Որդին, եւ ան՝ որու Որդին կ'ուզէ յայտնել» Մատ. ԺԱ. 27: Եւ դարձեալ Սբ. Գիրքը մեզի զայս կը վկայէ երբ կ'ըսէ շատ մը տեղերու մէջ թէ ով որ կը փնտռէ զԱստուած, կը գտնէ:

Քրիստոնէից Աստուածը չէ միայն երկրաչափական ինքնայայտ ճշմարտութիւններու եւ կանոնաւորութեան Աստուածը: Ասիկա Աստուծոյ հեթանոսներուն յայտնուած կողմն է: Ան չէ նաեւ միայն այն էակը որ իր նախախնամութեամբ կը հսկէ մարդոց կեանքին եւ ստացուածքին վրայ՝ տալով երջանիկ տարիներու շարք մը ամէն անոնց որոնք կը պաշտեն զիւրք: Ասիկա Հրեաներուն բաժինն է: Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ քրիստոնէից Աստուածը սիրոյ եւ միախառնութեան Աստուածն է: Աստուած մըն է, որ կը լեցնէ իրեն պատկանած հողին ու սիրտը: Աստուած մըն է որ ներքնապէս կը յայտնէ անոնց՝ իրենց թշուառութիւնը եւ իր անսահման ողորմութիւնը, Որ կը միանայ ասոնց հոգոյն, կը լեցնէ զայն հեղութեամբ, ուրախութեամբ, վստահութեամբ եւ սիրով եւ Որ անոնց անկարելի կը դարձնէ իրմէ դուրս ուրիշ նպատակ ունենալ:

Քրիստոնէից Աստուածը զգալ կուտայ հոգիին թէ ինքն է միակ բարիքն ու ստացուածքը, թէ ամէն հանգստութիւն իր մէջն է եւ թէ միայն զիւրքը սիրելով մարդը ուրախութիւն պիտի ունենայ: Ան նոյն ատեն ատելի կ'ընէ ամէն ինչ որ արգելք կը դառնան զիւրքը բոլոր սրտով սիրելու: Բարձրամտութիւնը, որ ետ կը կեցնէ Աստուծմէ, անտանելի է Անոր: Ան կ'զգացնէ թէ մարդը ունի այս բարձրամտութեան արմատը, և թէ ինքն է միայն որ կրնայ զայն բժշկել:

Ահա թէ ինչ ըսել է ճանչնալ զԱստուած քրիստոնէական տեսակէտով: Բայց զԱյն այս կերպով ճանչնալու համար մարդը պէտք է գիտակցի նոյն ատեն նաեւ իր անձնական թշուառութեանը, Աստուծոյ մօտենալու անարժանութեանը եւ Անոր միանալու համար Միջնորդի մը անհրաժեշտութեանը: Պէտք չէ իրարմէ բաժնել այս ծանօթութիւնները, վասնզի այս բաժանումը ոչ թէ միայն անօգուտ է, հապա փնասակար: Առանց մեր թշուառութեան գիտակցութեան զԱստուած ճանչնալը՝ հպարտութիւն յառաջ կը բերէ: Մեր թշուառութեան գիտակցութիւնը առանց Յիսուս Քրիստոսի՝ յուսահատութիւն: Յիսուս Քրիստոսի գիտութիւնը մեզ կ'ազատէ թէ՛ հպարտութենէ եւ թէ՛ յուսահատութենէ, վասնզի Անով կը գտնենք զԱստուած, կը ճանչնանք մեր թշուառութիւնը եւ անկէ ազատելու միակ ճամբան:

Կրնանք ճանչնալ զԱստուած՝ առանց ծանօթանալու մեր թշուառութեան, կամ գիտակցիլ մեր թշուառութեանը առանց Աստուծոյ. կամ կրնանք ճանչնալ թէ՛ զԱստուած եւ թէ՛ մեր կրնանք ճանչնալ թէ՛ զԱստուած եւ թէ՛ մեր թշուառութիւնը, բայց առանց գտնելու մեզ ճշող թշուառութիւններէն ազատելու միջոցը, բայց չենք կրնար ճանչնալ Յիսուս Քրիստոս առանց միանալու ճանչնալու թէ՛ զԱստուած եւ թէ՛ մեր թշուառութիւնը եւ թէ՛ անոր դարմանը, վասնզի Յիսուս Քրիստոս ոչ միայն Աստուած է, հապա նաեւ մեր թշուառութեան դարման Աստուածը:

Այսպէս ամէն անոնք որոնք առանց Յիսուսի կը փնտռեն զԱստուած, ոչ մի լոյս կրնան գտնել որ ճշմարտապէս գոհացնէ զիրենք եւ օգտակար ըլլայ իրենց, վասնզի կամ չեն հասնիր Աստուծոյ մը զոյութեան եզրակացութեան, կամ եթէ հասնին՝ իրենց անօգուտ է, վասնզի կ'սկսին իրենք իրենց միջոցներ հնարել առանց միջնորդի յարաբերելու Աստուծոյ հետ զոր գտան առանց միջնորդի: Այսպէսով կ'իյնան կամ անաստուածութեան եւ կամ աստուածեանութեան (Deïsme) մէջ, որոնց երկուքն ալ զրեթէ հաւասարապէս զարշելի են քրիստոնէութեան:

Ուստի նախ պէտք է ձգտիլ Յիսուս Քրիստոսը ճանչնալու քանի որ իրմով միայն կըրնանք զԱստուած ճանչնալ:

Ան է մարդոց ճշմարիտ Աստուածը, այսինքն թշուառներու եւ մեղաւորներու: Ան որ չի ճանչնար զԱյն, ոչ մէկ բան չի հասկնար աշխարհի օրէնքէն և ոչ ալ ինքզինքէն: Զի ոչ միայն զԱստուած կը ճանչնանք Անով, հապա ինքզինքնիս ալ:

Առանց Յիսուս Քրիստոսի մարդ վատթար և թշուառ է, բայց Յիսուս Քրիստոսով մարդ ազատ է ասոնցմէ: Անոր մէջ է մեր երջանկութիւնը, առաքինութիւնը, մեր կեանքը, լոյսը եւ յոյսը: Անկէ դուրս միայն կիրքեր, թշուառութիւն, մեթութիւն եւ յուսահատութիւն կայ, եւ Աստուծոյ էութեան եւ մեր բնութեան մէջ միայն խաւար ու շփոթութիւն կը տեսնենք:

Թարգ. Թրանսերէնէ

Փարիզ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԱԼԸՄԵԱՆ

### ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՅԻՆ

(Շար. 5 Թիւէն)

Մամոնայ տնտուծոյն ծառայութիւն.—

Որչա՛փ դժուար է անոնց որ հարստութիւն ունին, Աստուծոյ թագաւորութիւնը մտնել:

Ղուկ. ԺԸ. 24

Թերեւս երբեք եղած չէ ատեն մը, երբ Մամոնը ունեցած չըլլայ իր երկրպագուները: Շատերուն համար անիկա զխաւոր աստուածն է: Անոնք կը պաշտեն զայն անդադար: Բայց Աստուծոյ խօսքը կ'զգուշացնէ ընդդէմ հարստութեան, մամոնապաշտութեան: Այս նիւթին մէջ աւելի յառաջանալէ առաջ՝ Սուրբ Գիրքէն մի քանի խօսքեր կարդանք:

«Երկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք, ուր ցեցը ու ժանգը կ'ապականեն, եւ ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան, հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը: Գնա ունեցածդ ծախէ եւ տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, եւ եկուր Իմ ետեւէս: Որչա՛փ դժուար է իրենց հարստութեանը յուսացողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: Աղէ՛ հիմա հարուստներ, լացէ՛ք ու ողբացէ՛ք ան թշուառութիւններուն համար որ ձեր վրայ պիտի գան: Բայց անոնք որ հարստանալ կ'ուզեն, կ'իյնան փորձութեան ու որոգայթի եւ շատ յիմարական ու փնասակար ցանկութիւններու մէջ, որոնք սատակումի ու կորստեան մէջ կ'ընկղմեն մարդիկը: Ինչու որ ամէն հարութիւններուն արմատը արծաթսիրութիւնն է: Բայց զուն, ով մարդ Աստուծոյ, փախիր աս բաներէն»:

Առաքելական դարու հաւատացեալները ապրեցան այս խօսքերուն համաձայն, անոնք, «Մ-

տացուածքնին եւ ունեցած բաներնին կը ծախէին, ու անոնց զինները կը բաժնէին ամենուն, որուն որ բան մը պէտք ըլլար»: Այս կեանքը կարճ չտեւեց, հարիւրաւոր տարիներ Քրիստոսի դարձող շատ հարուստներ իրենց ունեցածը տուին եւ ապրեցան անձնագոհ կեանք մը: Պատմութիւնը մեզի կուտայ այդպիսիներէն ոմանց անունը: Յիշենք Յ. Տ. 347ին Հոովմի մէջ ծնած Բօլա անունով հարուստ եւ նշանաւոր կընոջ մը պատմութիւնը: Կ'ըսուի թէ Իտալիոյ ամբողջ մէկ քաղաքը անոր կը պատկանէր: Նա է-վընթայն լերան վրայ կ'ապրէր մեծափառութեամբ, բայց երբ դարձի եկաւ՝ թողուց իր մեծաշուք կեանքը, իր ունեցածը աղքատներուն եւ Աւետարանի գործին համար տուաւ եւ հիւանդապահ եղաւ: Ինքը հացով եւ քիչ մը իւղով ապրեցաւ, իր մարմինը նիհարցուց ծոմապահութեամբ, խոտէ փսիաթի վրայ քնացաւ, մազէ հագուստ հագաւ եւ զլացաւ իր անձին այն հաճոյքները որոնց վարժուած էր:

Մեծն Ապրսեսի համար պատմութեան մէջ կը կարդանք թէ, «Մկրտուելուն պէս իր իշխանական հարստութիւնը աղքատներուն բաժնեց՝ Կիպրիանոսի եւ Ոսկերեքանի պէս»: Յետոյ կը կարդանք, «Ասիկա վաղեմի եկեղեցիին մեծ գաղափարին համաձայն էր»:

Այսօր տարբեր է: Որքա՛ն տարբեր է այսօր գործնական քրիստոնէութեան նկատմամբ մեր գաղափարը: Այս սերունդին մէջ ո՛վ լսեր է մարդու մը մասին, թէ դարձի եկած ըլլալուն համար իր զրամէն հրաժարած է: Ո՛ր քարոզիչը այսօր իրեն նիւթ ըրած է մեր Տէրոջը սա խօսքերը, «Որչա՛փ դժուարին է անոնց որ հարստութիւն ունին, Աստուծոյ թագաւորութիւնը մտնել»: Ո՛հ, ոչ, մենք զարգացած դարու մը մէջ կ'ապրինք: Քրիստոսի այդ խօսքերը մեր քրիստոնէութեան մէջ տեղ չունին: Քրիստոնեաներ հարստութիւն կը դիզեն, ոչ մէկ քարոզիչ հակառակ կը խօսի: Մինչեւ անգամ մեր հովիւներէն շատերը բարձր ամսականներ կ'ստանան, ծախու կ'առնեն բաժնեթուղթեր սա յուսով թէ պիտի հարստանան: Ո՛հ, երանի՛ թէ ես հարուստ ըլլայի, ոճը սրտի փափաքն է քրիստոնէութեան մեծ զանգուածին: Եթէ զրամ ունենան կը խորհին թէ գեղի կեանք մը ապրելու իրաւունք ունին: Վաղեմի քրիստոնեաներ ասանկ չէին: Անոնք Քրիստոսի սորվեցուցածին հաւատացին: Հարստութիւն չփնտոցին, «Հապա կերակուր ու հանդերձ ունենալով անոնցմով բաւականացան»: Եթէ Յիսուս Քրիստոսով փրկութիւն ընդունած ա-

տեն հարստութիւն ունէին՝ աղքատներուն տուին զայն, այս կերպով իրենց գանձերը երկինքի մէջ դիզեցին: Յիսուսի օրինակին հետեւեցան՝ ապրելով անձնագորհ կեանք մը: Չփնտոցեցին այս աշխարհի հաճոյքը, հապա հոգւոյն ներքին ուրախութիւնը՝ կատարելապէս հնազանդելով Տէրոջ: Սակայն այսօր քրիստոնէութիւնը ասանկ ներքին ուրախութեան շատ քիչ տեղեակ է: Ուրախութիւնը կը փնտոենք՝ աշխարհիս ճամբով, եւ դրամն է միջոցը որով այս տեսակ երջանկութիւն կ'ստացուի: Մենք դրամասէր ժողովուրդ ենք: Այսօր մարդու մը արժէքը իր ինչ ըլլալը չէ, այլ ինչ ունենալն է: Եթէ մէկը հարստութիւն ունի՝ ընկերութեան մէջ վարկ եւ դիրք ունի: Հարուստ մէկը ինչ ուրախութեամբ կ'ընդունուի եկեղեցին: Կը յիշեմ դէպք մը: Բաղարի մը մէջ ժողով սարքուած ատեն շատ հարուստ եւ հանրաժանօթ երիտասարդ մը միացաւ եկեղեցիին: Երբոր պատեհութիւն տրուեցաւ անոր հաղորդակցութեան ձեռք տալու, ամէն մարդ կ'ուզէր անոր ձեռքը բռնել: Յաջորդ իրիկուն խեղճուկ հագուած երիտասարդ մը միացաւ եկեղեցիին: Անոր ձեռքը թոթմելու համար մի քանի մարդ միայն եկաւ: Աւետարանիչը ոտքի վրայ ելլելով պոռաց, «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, աւելի ուրախութիւն կայ այս քաղաքին առաջին Մկրտական եկեղեցիին մէջ հարուստ երիտասարդի մը համար որ կ'ապաշխարէ, քան երկոտասնեակ աղքատ ապաշխարողներուն համար»: Այո, հարուստը մասնաւոր ընդունելութիւն կը գտնէ եկեղեցիներուն մէջ, ուստի իր հարստութենէն ոչ մի բան կը թողու: Ինքը մեծածախս կերուխում կ'ունենայ, հոգ չէ թէ քաղաքին մէջ որբեր եւ որբեւարիներ կրնան սովամահ ըլլալ: Եթէ իր եկամուտին մէկ տասնեորդը տալու ըլլայ՝ շատ առատաձեռն կը ճանչցուի: Յաճախ մէկ տասնեորդն ալ անպատճառ չպահանջուիր: Բայց Յիսուս ըսաւ, «Բու բոլոր ունեցածդ ծախէ եւ աղքատներուն բաշխէ, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր Իմ ետեւէս»: Գիտեմ ասիկա կրօնամոլութիւն պիտի սեպուի այս տողերը կարդացողներէն շատերու կողմէ, սակայն ես միայն Աստուծոյ խօսքին կը կառչիմ: «Այն որ աշխարհիս բարիքը ունի, եւ իր եղբայրը բանի մը կարօտ կը տեսնէ ու իր գութը անկէ կը զոցէ, ինտո՞ր Աստուծոյ սէրը անոր մէջ բնակած կ'ըլլայ»: Ամէն անգամ որ աս խօսքը կը կարդամ, կը յիշեմ ինծի ծանօթ հարուստ եւ միայն անունով քրիստոնեայ բժիշկ մը, որ շատ մը հիւանդներ եւ տառապեալներ ետ դարձու-

ցած է՝ առանց դարմանելու, որովհետեւ գործողութեան համար պէտք եղած դրամը չունէին: Նոյնպիսի անկարեկից արարքի մէջ կը գտնուին այսօր նաեւ ուրիշ շատ ունեւոր քրիստոնեաներ, նոյնիսկ հովիւներ: Առաքեալը բոլոր այդ անձերուն ալ կը հարցնէ, «Ինչպէ՞ս կրնաս քու ճոխութեանդ մէջ մոռնալ քու տառապեալ եղբայրդ, եթէ իրաւ Գրիստոսի սէրը քու մէջդ կը բնակի»:

Մեր Տէրը կ'ըսէ, «Ան որ իր հայրը կամ մայրը Իսմմէ աւելի կը սիրէ, Ինծի արժանի չէ, եւ ան որ իր խաչը չառնէր ու Իմ ետեւէս գար, Ինծի արժանի չէ»: Եթէ հայրը կամ մայրը Գրիստոսէն աւելի սիրողը Անոր արժանի չէ, ինչպէ՞ս կրնայ իր հարստութիւնը Անկէ աւելի սիրողը Անոր արժանի ըլլալ:

Յօժար չեն: Այսօր եկեղեցիին մեծ դժուարութիւնը սա է: Գրիստոսի սիրոյն համար բան մը ձգելու յօժարութիւնը չունինք: Մովսէս Աստուծոյ հաւատարիմ ըլլալու համար յօժարեցաւ թողելու իր դիրքը Եգիպտական փառաւոր պալատին մէջ: Դանիէլ նախամեծար համարեց առիւծներու գուրը նետուիլ, քան Աստուծոյ անհաւատարիմ գտնուիլ: Պետրոս եւ միւս աշակերտները «Ամէն բան» թողուցին եւ Յիսուսի ետեւէն գացին՝ Անոր անուանը համար նեղութիւն կրելը ուրախութիւն սեպելով, բայց մեր պաշտօնեաներ, միսիոնարներ, աշխարհականներ յօժար չեն կեանքի հանգիստը թողուլ, ոչ ալ կեանքի պերճանքն ու ունայնասիրութիւնները՝ Փրկչին սիրոյն համար: Յօժար չեն, յօժար չեն, Յօժար չեն:

«Թէ որ մէկը Իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ, եւ իր խաչը վերցնէ, ու Իմ ետեւէս գայ»:

(Շար)

.....  
Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

#### ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երեք հիւագոյն Սբ. Գիրքերը.—

Ամենէն հին ձեռագիրները գլխադիր գրուած են: Այս բազմաթիւ ձեռագրաց մէջէն ամենէն կարեւորներն են Codex Vaticanus, Codex Sinaiticus եւ Codex Alexandrinus. Տարօրինակ է նկատել, որ այս երեք կարեւորագոյն ձեռագիրները բաժնուած են քրիստոնէութեան երեք կարեւոր ճիւղերուն միջև: Առաջինը Հռովմէական

եկեղեցւոյ ձեռքն է, երկրորդը կը վերաբերի Օրթոտոքս եկեղեցիին, իսկ երրորդը Բողոքական Անգլիոյ ստացուածքն է:

Ա. Codex Vaticanus: Այս ձեռագիրը աշխարհի առաջին հին Սբ. Գիրքը կը համարուի որ վատիկանի գրադարանը գետեղուեցաւ հաւանաբար 1448ին Նիզովա Ե. Պապին ձեռքով: Վատիկանի վարչութիւնը երկար ատեն անօրինակ նախանձով մը պահպանեց այս գործը, նոյնիսկ գիտնականներուն արգիլուած էր տեսնել զայն: Վերջերս Տր. Թրէկէլ յաջողեցաւ արտօնութիւն ձեռք բերել, բայց ինչ պայմաններով: Նախ լաւ մը խուզարկեցին զինքը, թուղթ, մելան, գրիչ առնուեցան իրմէ: Մինչ գիտունը կը քննէր գիրքը, երկու քահանաներ կը ջանային զինքը մտացրուել. երբեմն նոյնիսկ գիրքը ձեռքէն առնելով, երբ տեսնուէր որ քիչ մը շատ ուշադրութեամբ կը գննէր մասնաւոր հատուած մը...: Բայց Պիոս Թ. Պապը 1872ին հրատարակեց ընտիր ընդօրինակութիւններ զորս այժմ կարելի է գտնել Եւրոպայի կարեւոր գրադարաններուն մէջ:

559 թերթերէ բաղկացեալ այս գիրքը զմայլելի գրութիւն մ'ունի: Միայն թէ ամբողջ չէ: Հին Կտակարանէն (որ յունարէն գրուած է) կը պակսին Ծննդոցէն եւ Սաղմոսէն մասեր. իսկ նոր Կտակարանը կը դադրի Եբրայացւոց թուղթին գլխ. Թ. 14ի կէսին «Կը սրբէ» բառին վրայ: Մնացեալը կը պակսի:

Այս մեծարժէք ձեռագիրը որ Դ. դարու գործ կը համարուի, գրուած է հաւանաբար Եգիպտոսի մէջ, եկեղեցւոյ հայրերէն Աթանասի շրջանին:

Բ. Codex Sinaiticus: Այս ձեռագիրը իր անունը կը պարտի իր գտնուած վայրին: Անակնկալ եւ յուզիչ բան մը եղաւ այս գիտութիւնը: Սեփականը Տր. Թիշէնտորֆ 1844ին ի խնդիր հին ձեռագրաց, Սբ. Կատարինէ վանքը կը գտնուէր որ շինուած է Սինայ լեռան ստորոտը: Յանկարծ նշմարեց որ սրահին մէջտեղը լեցուն կողով մը մազաղաթ կար: Գրապահը յայտնեց որ արդէն այդ գրութիւններէն երկու կողով... վառած էին, իրենց ողորմելի տգիտութեան մէջ չհասկնալով թէ ինչպիսի՜ արժէքաւոր գրութիւններ էին: Ինչ եղաւ թիշէնտորֆի զարմանքը երբ տեսաւ որ կողովը «Եօթանասից» թարգմանութեան մէկ ձեռագրէն բազմաթիւ էջեր կը պարունակէր: Գիտունը զմայլեցաւ անոնց հնութեան եւ արժէքին վրայ, իսկ վանականները թոյլ տուին որ 40 թերթ մը առնէ: Թիշէնտորֆ չկրցաւ ծածկել իր ուրախութիւնը, ինչ որ վա-

նականներուն մէջ կասկածներ արթնցուց, ուստի մերժեցին ուրիշներ ալ տալ:

Գիտունը Գերմանիա վերադարձաւ, ուր իր գիտին հրատարակումը մեծ աղմուկ հանեց գիտնական շրջանակին մէջ: Անգլիացիք փութով ուրիշ գիտուն մը զրկեցին Արեւելք, նոր ձեռագիրներ որոնելու համար, բայց չյաջողեցան բան մը գտնել, զի թիշէնտորֆ գաղտնի պահած էր վանքին անունն ու տեղը:

Թիշէնտորֆ Եգիպտոսի արքունիքին մէջ ունեցած իր մէկ ծանօթին միջամտութեան ապաւինելով կրկին փորձեց վանքին բարեացակամութիւնը: Բայց վանականները որ այժմ գանձին արժէքը հասկցած էին, մերժեցին ռեւէ բան ցոյց տալ:

1859ին դարձեալ գնաց: 15 տարուայ ընթացքին յաջողած էր շարժել ոմանց հետաքրքրութիւնը եւ շահիլ Ռուսիոյ կայսեր համակրութիւնը, եւ անոր հրամանովն էր որ ձեռնարկեց այս վերջին փորձին: Սակայն այս ալ ռեւէ արդիւնք չտուաւ: Յուսակաւոր գիտունը կը պատրաստուէր մեկնիլ յաջորդ օրը: Վերջին օրը վանքին մահապաշտին հետ կատարած պտոյտէ մը վերադարձին, վանականը զինքը իր խցիկը հրաւիրեց կազդուրիչ բան մը հրամցնելու համար: Հազիւ ներս մտած՝ վանականը կ'ըսէ, «Ես ալ Եօթանասիցէն օրինակ մը կ'արդացած եմ», եւ այս ըսելով վերէն մեծկակ ծրար մը վար կ'առնէ:

Թիշէնտորֆ ծածկոցը բանալով, զարմանօք կը տեսնէ որ հոն էին ոչ միայն 15 տարի առաջ իրեն տրուած թերթերուն մնացորդներէն ու Հին Կտակարանէն (Յունարէն) ընդարձակ հատուածներ, հապա նաեւ նոր Կտակարանը ամբողջութեամբ, նոյն իսկ Անկանոն գիրքերէն ալ մաս մը, եւ եկեղեցւոյ հայրերէն երկու գործ, «Բառնաբասի թուղթը» եւ Հերմասի հովիւէն» մաս մը ծրարուած էր այդ կարմիր սաւանին մէջ: Գիտունը այս անգամ դասը լաւ սորված էր եւ գիտեցաւ ծածկել իր ուրախութիւնը: Անտարբեր շեշտով մը թուլտուութիւն խնդրեց ծրարը իր խցիկը տանելու աւելի ազատօրէն քննելու համար: Հոն ինքնիրեն ազատօրէն արտայայտեց իր բովանդակ խնդրութիւնը քանզի իր ձեռաց մէջ ունէր Սբ. Գրոց մեծարժէք գանձերէն մին, «Որ հնութեան եւ կարեւորութեան արժէքով» կ'ըսէ «կը գերազանցէր ինչ որ տեսած էի 20 տարուայ ուսումնասիրութեանցս ընթացքին»:

Շնորհիւ Ռուսիոյ կայսեր միջամտութեան, կը յաջողի ձեռք ձգել թանկագին ձեռագիրները: Դարձեալ արքայական առատաձեռնութիւնը

Թոյլ կուտայ իրեն 1862ին հրատարակելու չորս հատորնոց հոյակապ նմանագրութիւն մը, որմէ 300 օրինակ տարածուեցաւ:

Բնագիրը որ Դ. դարու գործ կը նկատուի, իբր գրական թանկարժէք ձեռագիր մը պահուեցաւ Սբ. Բեթըրսպուրկի կայսերական մատենադարանին մէջ:

Codex Alexandrinus: Այս ձեռագիրը Անգլիոյ Կարոլոս Ա. թագաւորին նուիրուած է Կ. Պօլսոյ յոյն պատրիարքին կողմէ 1628ին: Հաւանաբար պատրիարքը զայն Աղէքսանդրիայէն բերաւ, որմէ գիրքը կ'առնէ իր անունը: Ձեռագրին առաջին էջին վրայ գրուած է, «Գրուած Մարտիրոս Թեքլայի կողմէ»:

Այս ձեռագրին ալ բոլորովին լման չէ: Հին Կտակարանէն 10 թերթ կը պակսի, իսկ Նորէն կարեւոր բաժին մը, պակաս է Մատթէոսի աւետարանէն, մի քանի գլուխ Յովհաննէսէն եւ Բ. Կորնթացւոց թուղթէն:

Պատուական մագաղաթներ գործածուած են այս գրքին համար ալ, բոլորը գրուած գլխագիր տառերով: Գործը Ե. դարու գրութիւն կը համարուի ու գրուած է Եգիպտոսի մէջ:

Վերջաբան:

Հին Կտակարանին պատմութեան շուրջ մեր սկսած ուրուագծերը լրացնելու համար հարկ էր մեզի խօսիլ տակաւին Սբ. Գրոց թարգմանութեանց վրայ ալ սկսեալ «Եօթանասնից» և «Վուլկաթ», այսինքն Յունարէն և Լատիներէն թարգմանութիւններէն: Նոյնպէս շատ հետաքրքրական պիտի ըլլար հետեւիլ այլեւայլ ազգաց, հաւատացեալներու եւ գիտուններու այս նպատակաւ թափած ճիգերուն: ԺՋ. դարու բարեկարգութիւնը մասնաւոր զարկ մը տուաւ այս գործին: Հետաքրքրական պիտի ըլլար քննել թէ զանազան լեզուներով Սբ. Գիրքերը ի՞նչ փուլերէ անցան արդիական սքանչելի թարգմանութիւններու հասնելէ առաջ:

Սակայն կ'առաջադրենք ներկայիս թողուլ զայս, նկատելով որ Սբ. Գրոց պատմութեան էն դժուար մասերը համառօտիւ շօշափեցինք արդէն: Այս մնացեալ մասը ամենէն դիւրին և հանրածանօթ մասը կը կազմէ, եւ հետաքրքիր ընթերցողը դիւրաւ կրնայ ձեռք բերել իր ուզած տեղեկութիւնները, այս նիւթին շուրջ գրուած որեւէ գիրք թղթատելով, քանզի պատմութեան այս մասը բազմապատիւ նոր է ու տուեալները շատ սրտ:

Սբ. Գրոց քննական պատմութիւնը շատ կա-

րեւոր է Սբ. Գիրքի աշակերտին, լաւ եւս ըմբռնելու համար անոր պատմական արժէքը և հնախօսական հեղինակութիւնը: Հետզհետէ կը տարածուին «Սուտանուն գիտութեան եւ նորելուկ վարդապետութեանց երեքուն տեսակէտները: Ասոնք անխոփ դիմագրաւելու համար միշտ օգտակար է դիմել անկեղծ եւ անաչառ պատմութեան, գիտնականներու բերած իրապէս վերջնական արդիւնքներուն մէջ ողջունելու այն յարգանքն ու վստահութիւնը զորս գիտութիւնը կ'ընծայէ մեր ամենասուրբ հաւատքին: Անտարակոյս միշտ ուրախութեան եւ քաղցրութեան զբրական կէտ մը պիտի ըլլայ տեսնել, որ կրկնակի փորձերէ յետոյ Աստուածաշունչը միշտ հաւատարիմ եւ յաղթական դուրս կուգայ:

Բայց զգոյշ: Հաւատքը գիտութեան աղախինքն չղարձենք, այլ յաւէտ սորվինք Աստուծոյ խօսքը: Չձգենք Սբ. Գիրքը որ մեզի տրուած է Բարձրեալին Սուրբ մարգարէներուն եւ առաքեալներուն կողմանէ, որուն էջերը օծուն են անճառելի Երրորդութեան աստուածային շունչովը: Սիրենք Սբ. Գիրքը, ան է որ կրնայ զմեզ իմաստուն ընել փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը: Աղօթքով և երկիւղածութեամբ ծռինք անոր էջերուն վրայ Սբ. Հոգւոյն օգնութեամբ անկէ շնչելու յայտնութեան կրակը: Յայնժամ այն էջերը պիտի լուսավառին հոգևոր գիտութեան անպատմելի ճաճանչներով: «Այն բաները զորոնք աչք չէ տեսեր եւ ահանջ չէ լսեր եւ որոնք մարդու սրտին մէջ չեն ինկեր», հետզհետէ տեսանելի, լսելի եւ զգալի պիտի դառնան:

Մինչ Տէրոջը փառքը կը դիտենք երկնաստուր հայելին մէջ, նոյն պատկերին կը նորոգուինք փառացի փառս Տէրոջը Հոգիէն: Եւ երբ փակենք գիրքը՝ մտնելու կորսուած աշխարհի մը խարխափող ամբոխին մէջ և առօրեայ կեանքին ստուերոտ ճանապարհը, յայնժամ, պիտի կրնանք ապրիլ եւ գործել իբր կեանքի եւ յաւիտենականութեան գաղտնեաց տեղեակ անձինք, իբր Աստուծմէ սորված մարդիկ, որոնք Քրիստոսի միտքը ունին:

Փարիզ

Չ. Բ. ՊՈԻՏԱՐԵԱՆ



ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ

Բ. ՀՐԱՇԱԼԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մինչև հիմա խօսեցանք հինգ ներքին էական պատճառներու վրայ, այժմ թուենք երկու արտաքիններ ալ, որոնք թէեւ ոչ այնքան կարեւոր որքան առաջինները, բայց դարձեալ մեծ դեր ունեցած են Պօղոսի յաջողութեանը մէջ: Ասոնք են.—

6. Պօղոսի գործելակերպը.— Հըտսըն թէյլըր հետեւեալ խօսքերով բացատրած է Զինաստանի մէջ իր կիրարկած մէթոտը, «Մեր միսոնարական բոլոր ձեռնարկները կ'ընթանան դրութեանական եւ մեթոտիկ կերպով եւ կը ծառայեն ամբողջ Զինաստանը աւետարանելու մեծ նպատակին: Առաջադրուած նպատակը չէ «ներքին Զինաստանի միսիոնարութեան համար ըստ կարելոյն շուտ ու շատ նորադարձներ շահիլ՝ միայն նեղ սահմանի մը մէջ, հապա յաւէտ ամբողջ Զինաստանի աւետարանուիլը կարելի դարձնել աւանակարճ ժամանակի մը մէջ: Մեզի համար քիչ կարեւորութիւն ունի թէ որու պիտի վիճակուի յետոյ որաները հաւաքել: Ուստի երբ նոր նահանգ մը կը մտնենք, կը ջանանք մեր առաջին կայանը հաստատել անոր ամենակարեւոր քաղաքին մէջ, թէեւ ծանօթ իրողութիւն մըն է թէ ամբողջ նահանգին մէջ ուրիշ ոեւէ տեղ եկեղեցի մը հիմնելը այնքան դժուար չէ որքան զլիւսւոր քաղաքին մէջ: Մեր յաջորդ պարտականութիւնն է, որչափ հնար է, միսիոնարական կայաններ հաստատել նաեւ կուսակալանիստ եւ ապա փոքր քաղաքներու մէջ: Եթէ մեզի տրամադրուած ուժերը գործածէինք գիւղերու մէջ, կարելի պիտի ըլլար կարճ տարիներու մէջ աւելի մեծ բազմութիւն մը դարձի առաջնորդել, բայց դաշտի քրիստոնեաներու ազդեցութիւնը՝ հաւանաբար իրենց գիւղերու սահմանէն անդին չպիտի անցնէր: Ընդհակառակը վերեւ պարզուած ծրագրով կը հաստատուին այնպիսի կեդրոններ, որոնցմէ Աւետարանը կրնայ տարածուիլ ամբողջ նահանգին մէջ»:

Ահա այսպիսի ծրագրով մը գործեց նաեւ Պօղոսը: Իր նպատակն էր Հռովմէական մեծ կայսրութեան բոլոր երկիրները Քրիստոսի ոտքը խոնարհեցնել: Ուստի իր ոյժն ու ժամանակը չէր վախճել գիւղերու եւ աննշան քաղաքներու մէջ, հապա նախ կ'աւետարանէր ոեւէ նախնադի մեծ անակարեւոր քաղաքին մէջ, հոն կը շահէր Քրիստոսի առաջին զինուորները, զորոնք կը կազ-

մակերպէր իբր փոքր զօրագունդ մը, անոր կը յանձնէր շրջակայ գիւղերուն եւ փոքր քաղաքներուն զբաւումը եւ ինքը կ'անցնէր ուրիշ նահանգի մը կեդրոնը՝ հոն ալ նոյն գործը ընելու համար: Այս իրողութեան համոզուելու համար բաւ է միայն թոռցիկ ակնարկ մը նետել առաքեալին միսիոնարական դաշտին վրայ: Սաղամինա, Պափոս, Պիսիդիայի Անտիոք, Իկոնիոն, Լիւզերա, Եփեսոս, Փիլիպպէ, Թեսաղոնիկէ, Աթէնք, Կորնթոս, եւն. եւն. այն օրերուն Հռովմէական պետութեան մէջ շատ նշանաւոր տեղ կը գրաւէին իբր զինուորական, քաղաքական, առեւտրական ու քաղաքակրթական կեդրոններ: Պօղոս ասոնցմէ իւրաքանչիւրին մէջ գործեց այնքան երկարատեւ, մինչեւ յաջողեցաւ հիմնել կենսունակ եկեղեցիներ, որոնք արմատացած ըլլալով Յիսուսի վրայ՝ աստուածային լուսով լուսաւորեցին այդ բոլոր նահանգները: Անիկա կեդրոններու մէջ ձգեց կրակը, քանզի գիտէր թէ այդպէսով պիտի կրնար բռնկցնել ամբողջ Հռովմէական կայսրութիւնը: Ուստի ան իրաւունք ունէր ըսելու թէ աշխարհը Աւետարանով լեցուցած է: Բնականաբար անիկա ատով ըսել չէր ուզեր թէ ինքը Յիսուսի դարձուցած էր իրեն ծանօթ մարդկութեան կարեւոր մէկ մասը. բայց կը տեսներ թէ Քրիստոս իր գործունէութիւնով ստեղծած էր այնպիսի շարժում մը, որու միջոցաւ պիտի կրնար աստուածային զօրութեան հոսանքը երթալ նաեւ հեռւոր անկիւնները եւ կեանք արտադրել:

Ուշագրաւ է նաեւ հետեւեալ պարագան.— Պօղոս կը ձգտի աշխարհը զբաւել Յիսուսի համար եւ հաւատքի հնազանդութիւնը հաստատել բոլոր հեթանոսներուն մէջ (Ա. Տիմ. Բ. 4, 6, եւ Հռով. Ա. 5, ԺԶ. 26): Բայց այդ նպատակին հասնելու համար՝ չջանար ազգերը ոգեւորել քրիստոնէութեան բարձր իտէալներով եւ զանոնք քրիստոնեայ ժողովուրդներ դարձնել, հապա կ'ուզէ Յիսուսի ճանչցնել անհասկերուն իբր անոնց անձնական Փրկիչը: Միջին դարու մէջ միսիոնարութիւնը ընթացաւ առաջին ճամբայէն. ան կ'ազգէր իշխանաւորներուն վրայ եւ անոնց միջոցաւ ամբողջ ազգը կ'առնէր եկեղեցւոյ փարախին մէջ եւ ապա կը սկսէր իր գործը անհատ հոգիներու հետ: Այս կերպ գործունէութեամբ մենք ունեցանք միայն անունով քրիստոնեայ, բայց սրտով հեթանոս ազգեր:

Սակայն Պօղոս կ'աշխատէր ցուցնել մարդոց Յիսուսը իբր իրենց անձնական Փրկիչը եւ ոչ թէ իբր իրենց ազգին կրօնական առաջնորդը: Կը

ջանար որ ամէն ոք իր անձին համար վճռէ՝ Քրիստոսն ընդունիլ: Այդ պատճառաւ մեծ բազմութիւններ չէին որ դարձի կուգային, հապաքանի մը հատ հոս եւ քանի մը հոն. բայց այդ կերպով շահուած ամէն մէկ հաւատացեալ բոց մըն էր որ կը բռնկցնէր իր քովը եղողն ալ: Մէկ մոմը կը վառէր ուրիշ մը: Յիսուսէն բռնկեցաւ Պօղոս, Պօղոսէն Տիմոթէոս, Լիտիա, բանտապետը եւ ուրիշ շատեր ու անոնցմէ ալ ուրիշներ: Այսպէսով հաւատացեալներու թիւը օրէ օր կ'աւելնար:

Այս կէտին վրայ դեռ ըսելիքներ ունինք, բայց կը փափաքինք «Բանբեր»ի այս թիւով մեր յօդուածաշարքը վերջացնել: Ուստի մի քանի խօսք ալ ժամանակին վրայ:

7. Ժամանակը.— Պօղոս անձամբ ըսած է, «Երբ ժամանակը լեցուեցաւ, զրկեց Աստուած իր Որդին» (Գաղ. Դ. 4): Այդ երկիրներու մէջ Պօղոսի ատենէն աւելի նպաստաւոր ժամանակ մը չի կար Աւետարանը քարոզելու: Ընտիր եւ ապահով պողոտաներ՝ պետութեան մայրաքաղաքը Հռոմ, կը միացնէին նահանգներու ամենէն հեռւոր անկիւններուն հետ: Միախառնուել կրնար ամէն կողմ անվտանգ ճամբորդել: Յունարէն լեզուն հասկնալի էր ամէն կողմ: Պօղոս եւ իր զործակիցները ստիպուած չէին ժամանակ կորսնցնել լեզու սորվելու համար: Յունական գրականութիւնն ու փիլիսոփայութիւնը մարդիկը թէեւ բարձր նիւթերու վրայ խորհելու վարժեցուցած էին, բայց չէին կրցած գոհացուցիչ պատասխան մը տալ մարդկային միտքը զբաղեցնող ամենէն կենսական հարցերու մասին: Ստոյիկեան բարոյագիտութիւնն ալ չէր յաջողած թուել կանգնել բարքերու անկման առջեւ: Տիրող դասակարգը շեղած էր կեանքի բարձրագոյն նպատակէն եւ իր ձանձրոյթը փարատելու համար կերութեամբ, թատրոնի, սուսերամարտի եւ անասնական կիրքերու յազեցման ետեւէ ինկած, իսկ գերիները միայն կէս մարդկային կեանք մըն էր որ կը քաշքշէին: Ամէն մարդ տարտամ փնտրուած մը ունէր. շատերու մէջ անորոշ փափաք մը արթնցած էր դէպի Աստուած: Ուստի Հռոմէական պետութեան սահմաններուն մէջ ամէն կարգի կրօններու ներկայացուցիչներ իրենց ապրանքը կը գովաբանէին: Փնտրող մարդկութիւնը մէջ մը առ կը փորձէր մէջ մը ան, բայց զոհացում չէր գտներ: Անկեալ մարդկութիւնը դեռ փոքր բան մը պահած էր աստուածային պատկերէն եւ այնքան դիւրին չգոհանար յարգով ու խոստով:

Այդ բոլոր անորոշութեան, տարտամութեան ու փնտրողութեան մէջ բնական էր որ մեծ ազդեցութիւն պիտի բանեցնէր խօսքը այնպիսի անձի մը որ կը քարոզէր մեծ հաւատքով, անձնուրութեամբ, ազդուութեամբ եւ աստուածային զօրութեամբ եւ որուն կ'ընկերանային առաքեալի նշաններն ու հրաշքները: Երբեք ու ամէն հովիւ տարուբերուող հեթանոսը իր առջեւ կը գտնէր մարդ մը, որ հաստատապէս գիտէր թէ ինչ կը խօսէր եւ ամէն ժամ պատրաստ էր իր խօսքերուն ճշմարտութիւնը ապացուցանել իր արեան վկայութիւնովն իսկ:

Հոս կ'արժէ յիշել թէ այդ ժամանակին սփռուած մէջ գտնուող Հրեայ սինակոլիսիսն ալ բաւական դիւրացուցած են Պօղոսի գործը: Միջերկրական երկիրներու մէջ իրենց անունովն իսկ ծանօթ սինակոլիսիսներու թիւը 150ի կը հասնէր. բունականաբար շատեր ալ կային որոնց անունները չեն յիշուած: Արդ՝ այս ժողովարաններու մէջ կը հաւաքուէին այն հեթանոսները, որոնք այլեւս ձանձրացած էին իրենց կուռքերէն ու իրենց սիրտերուն մէջ խոր կարօտ մը ունէին հանդէպ ճշմարտութեան: Մենք գիտենք որ զրիթէ ամէն տեղ Պօղոս նախ այդ ժողովարաններուն մէջ կը քարոզէր, ու ատոր զլխաւոր նպատակն էր այդ փնտրող հեթանոսներուն քարոզել ճշմարիտ Աստուածը ու զանոնք Քրիստոսի համար շահիլ: Յետոյ ատոնց միջոցաւ մուտք կը գտնէր նաեւ ուրիշ հեթանոսներու մէջ:

Առանց այդ սինակոլիսիսներու Պօղոսի գործը շատ դժուարացած պիտի ըլլար: Հոս կը տեսնենք թէ Աստուած այդ ժամանակին մէջ հեթանոսները մասնաւոր կերպով պատրաստած էր իր Որդին ընդունելու: Պօղոս իր հազոյն ահանջներով լսեց ժամանակի ձայնը, տեսաւ թէ հեթանոսութեան շէնքը խախտու էր եւ աստուածային բնաստութեամբ գիտցաւ թէ ուր եւ ինչպէս տալու էր իր հարուածը զայն տապալելու եւ անոր տեղ քրիստոնէութիւնը կանգնելու համար: Քանի որ առաքեալը՝ ինչպէս նախընթաց յօդուածներու մէջ տեսանք՝ ներքին պատրաստութիւններն ու յարմարութիւնները ունէր իր մեծ կոչման համար, գիտցաւ նաեւ ամենալայն ու ընտիր կերպովը շահագործել արտաքին պատեհութիւնները:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՎԵՐՋ



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

# ԿՈՄՍ ՅԻՆՑԷՆՏՈՐՓ

Միսինարական գործին թափ տուող ամենէն կարեւոր անձնաւորութիւններէն մին եղած է Կոմս Յինտէնտորֆ: Ուստի կը փափաքինք «Բանբեր»ի ընթերցողներուն՝ Օպերլինէն ետքը՝ Ա. տուծոյ այս ծառային կեանքն ու գործերը ծանօթացնել՝ քաղելով Հ. Ռէսմըրի «Կոմս Յինցէնտորֆ» անուն գործէն:

Գ. Գ. Խ.

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ծնած է 1700ին Սաքսոնիոյ զեղեցիկ մայրաքաղաքին Տրէգտընի մէջ: Իր հայրը Սաքսոնիոյ նախարարներէն մին էր եւ մեծ յարգանք կը վայելէր պաշտօնին մէջ: Բայց հիւանդոտ էր եւ յայտնի էր որ չպիտի կրնար երկար ապրիլ: Ուստի երկրէն աւելի երկիրքի կապուած էր եւ շատ մօտ յարաբերութիւն ունէր Յակոբ կոչուած կրօնաւորի մը հետ, որ աւետարանական կենդանի հաւատքը արծարծող ամենակարեւոր անձերէն մին եղած է:

Յինտէնտորֆ հազիւ վեց շաբթուան էր, երբ բարեպաշտ հայրը մեռաւ: Մայրը՝ այրիացած իր երիտասարդ տարիքին մէջ՝ առաւ իր որդին եւ Օպերլաուզիցի Կրոսէնըրստորֆ կոչուած գիւղը գնաց՝ իր ծնողաց քով: Բայց չորս տարի ետք Բրոնսկան մարշալի մը հետ դարձեալ ամուսնացաւ եւ Պերլին գնաց: Մանուկ Յինցէնտորֆ գիւղը իր մեծ մօր քով մնաց որ նահանգապետի մը կինն էր եւ ունէր զօրաւոր կամք եւ իմացական շատ բարձր կարողութիւններ: Նէ կը սիրէր իր թոռնիկը խանդակաթ սիրով եւ առ ալ կապուած էր իր մեծ մօր յարգալից սիրով: Տան մէջ Յինցէնտորֆի միակ խաղակիցն էր իր մօրաքոյրը, որ թէեւ միայն 10 տարուան մեծ էր անկէ, բայց դարձեալ մեծ ազդեցութիւն ունեցած է անոր հոգեւոր դաստիարակութեանը մէջ:

Տան մէջ կ'իշխէր կենդանի հաւատքը. մանուկը ամէն կիրակի կանոնաւորապէս եկեղեցի կ'այցելէր, իսկ ընտանեկան յարկին տակ՝ իր մեծ մայրն ու մօրաքոյրը իրեն ամէն օր կը կարդային հատուածներ Սուրբ Գիրքէն ու Լուտերի եւ ուրիշ հոգեւոր մարդոց գրքերէն: Մօրաքոյրը իրեն պարտականութիւն ըրած էր նաեւ մանկան հետ աղօթել ամէն առաւօտ եւ երեկոյ: Բնականաբար այս ամէնը մեծ ազդեցութիւն ըրին մանուկ Յինցէնտորֆի վրայ, որուն միտքը շատ արթուն էր եւ զգայուն: Իր չափահաս տարիքին

անիկա անձամբ վկայած է, թէ իրեն՝ Յիսուս Բրիստոսէն եւ Անոր չարչարանքներէն զատ՝ ուրիշ եւ ոչ մէկ բան ուրախութիւն կը պատճառէ, եւ թէ ինքը զայն կը պարտի իր վերոյիշեալ ընտանեկան դաստիարակութեան:

Յինցէնտորֆ Կոմս էր, ազնուական դասակարգին կը պատկանէր: Ուստի իր մանկութեան օրերէն սկսեալ Յիսուսի ազնուականութիւնը, «Ասպետական ոգին ամենէն շատ կը հրապուրէր զինքը: Անգամ մը ըսած է, «Անոր սրտին ազնուականութիւնը իմ աչքերուս առջեւ կը վսեմացնէ Փրկիչը. քանզի երեւակայելի ամենէն վսեմ ազնուականութիւնը այն է որ Արարիչը իր արարածին համար մեռնի: Միայն այս ասպետականութիւնը եւ ոչ թէ աստուածաբանական ապացոյցներ զիս նորահաւատ ըրին»:

Քանի որ Յիսուս կեանքը իրեն համար նուիրած էր, ինքն ալ փոխադարձաբար վճռեց Անոր տալ իր կեանքը իր մանկութենէն սկսեալ: «Ես կը խորհէի», կ'ըսէ, «Եթէ ուրիշ մէկն ալ չյարգէ Յիսուսը, դարձեալ ես Անոր պիտի յարիմ, Անոր հետ պիտի ապրիմ ու մեռնիմ»: Եւ քանի որ Յիսուս իրեն համար մեռնելու նպատակաւ իրեն նման իր եղբայրը եղած էր, մանուկը կը խօսէր իր Փրկչին հետ իբր իր եղբօրը հետ եւ աղօթքով մտերմօրէն Անոր կը յայտնէր ամէն բան: Այսու ամենայնիւ իր ներքին մարդը գեոհասուն չէր. քանզի «Իր մարդկային էութեան թշուառութիւնն ու անկարողութիւնը տակաւին յայտնուած չէր իրեն»:

Երբ Յինցէնտորֆ 10 տարեկան եղաւ, մայրը Պերլինէն եկաւ եւ զինքը Հալէ քաղաքը տարաւ եւ դրաւ գիշերօթիկ վարժարան մը, որ վարչութեան տակն էր հաւատքի մեծ մարդուն, Փրօֆ. Ա. Հ. Ֆրէնքէի: Երբ մայրը իր որդին անոր ներկայացուց, մանկան ներկայութեան իսկ ըսաւ, «Իրաւ շատ ընդունակ է, բայց պէտք է զինքը ցած պահել, որպէսզի իր ընդունակութիւններուն վրայ չհպարտանայ»: Մօրը այս պահանջին համաձայն՝ ուսուցիչները շատ խիստ էին պատանի Կոմսին հանդէպ: Շատ անգամ զինքը կը ծեծէին հրապարակաւ եւ վրան իշու ահանջներ կախելով՝ փողոցը կը ցուցադրէին: Պատիժներ ուրիշ թէեւ այն օրերուն սովորական բաներ էին, այսուհանդերձ անտանելի էին պատանի Կոմսին համար: Այս անպատեհութեան կը միանային ուրիշ երկու ալ: Առաջին՝ իր ընկերներն ալ յաճախ զինքը կը ծաղրէին ու կը չարչարէին իր շատ աղօթելու եւ մեծ բաներու ձգտելուն պատճառաւ: Երկրորդ՝ ուսուցիչը, որու հակողութեան

յանձնուած էր Յինցէնտորֆ, շատ անձնասէր ու պահանջկոտ էր. իր դիրքը կը շահագործէր պատանի կոմսէն զրամ շորթելու Ասիկա չէր կըրնար իր ազգականներուն այս մասին ոեւէ զանգատ գրել, քանզի ստիպուած էր իր նամակները նախ հսկիչին ցուցնել:

Այս բոլոր դժուարութիւններուն հակառակ պատանի Յինցէնտորֆը իր համալսարանական կրթութեան համար հաստատուն հիմ մը դրաւ այդ գիշերօթիկնոցին մէջ: Օրինակի համար լատիններէն լեզուին այնքան լաւ տիրացաւ որ կըրնար յանպատրաստից բանախօսութիւն ընել անով: Մասնաւոր ընդունակութիւն ցուցուց նաեւ բանաստեղծական արուեստին մէջ: Իր 13 տարեկան հասակին մէջ գրած է երգ մը, որ մինչեւ հիմա կ'երգուի: Այս ընդոժին ընդունակութիւնը արծարծուեցաւ օրինակովը երեք հովիւներու, որոնք հոգեւոր երգերու հեղինակներ էին: Յինցէնտորֆ շատ օգտուած է նաեւ անոնց քարոզներէն: Ինքն անձամբ ըսած է, «Հալէ գտնուած ատենս միշտ ուրախութեամբ մէկը ինծի հետ եկեղեցի կը տանէի, քանզի ստուգապէս զիտէի թէ մեր քարոզիչին վրայ պարծենալու իրաւունք ունէինք»:

Այդ քարոզներուն ու Ֆրանքէի եւ ուրիշ հոգեւոր մեծ մարդոց ազդեցութեան տակ՝ իր հոգեւոր կեանքը աւելի խորունկցաւ: Իրեն համար ոչ մէկ պարտականութիւն այնքան գեղեցիկ էր, որքան ուրիշները Փրկչին հետ հաղորդակցելու մըդել: Ուստի իր ընկերներէն շատերը կը հաւաքէր տան ձեղնալարկը, ուր ամէնը բաց սրտով կը խօսակցէին կրօնական հարցերու շուրջ եւ կ'աղօթէին: Իրեն մտերմօրէն կապուած բարեկամներու հետ հաստատեց միութիւն մըն ալ որուն նպատակն էր չընդիլ Յիսուսի վարդապետութիւններէն, անոնց արժանաւոր կեանք մը ապրիլ եւ ընկերներուն բարիք ընել: Այդ բարեկամներէն մին Յինցէնտորֆի ամենէն աւելի մըտերմացաւ, ան էր Զուիցերիացի ազնուական մը Պարոն Վաթուիլ, երկուքը միասին կազմեցին ուրիշ մասնաւոր միութիւն մը, որու նպատակն էր աշխատիլ հեթանոսներու դարձին համար եւ որմէ յետոյ մեծ օրհնութիւններ յառաջ եկան:

Միայն վեց տարի մնաց գիշերօթիկ վարժարանը: 1716ին, երբ հազիւ 16 տարեկան կար շրջանաւարտ եղաւ եւ իրաւունք ստացաւ ուսանելու համալսարանին մէջ: Իր տարիքը մեզի պղտիկ թող չթուի. այն օրերուն համալսարաններու մէջ կ'ուսուցանէին դեռ այնպիսի ճիւղեր որոնք այժմ գոլէճի մէջ կ'ուսուցուին: Այսպէս

Յինցէնտորֆ համալսարանի ուսանող ըլլալով հանդերձ ֆրանսերէն ու լատիններէն լեզուները կը սորվէր:

Իր փափաքն էր աստուածաբանութիւն ուսանիլ Հալէի համալսարանին մէջ: Բայց իր ընտանիքը իր ազնուական դիրքին համապատասխան զտան իրաւաբանական ուսումը: Իր խնամակալը, որ իր հօրեղբայրն էր, այդպէս որոշած էր. ան կարգ մը նկատումներով որոշած էր նաեւ որ Յինցէնտորֆը ուսանի Վիթթէմպէրկի համալսարանին մէջ, ուր ժամանակաւ իրը փրօֆէսոր դասաւանդած էր նաեւ մեծ բարեկարգիչը՝ Լուտեր: Խնամակալի կարգադրութեան համաձայն Յինցէնտորֆ ստիպուած էր պարի, մենամարտի եւ ձիավարութեան դասերուն ալ հետեւիլ եւ ենթարկուիլ դարձեալ այն հսկիչին, որուն ձեռքէն այնքան նեղութիւն կրած էր գիշերօթիկ վարժարանին մէջ: Այս ամէնը բաւական դառնացուց երիտասարդ կոմսը, որ իր դժկամակութիւնը յայտնած էր հետեւեալ բառերով, «Իմ հօրեղբայրըս որոշած էր ըստ կարելոյն ուրիշ բնութիւն մը ստեղծել իմ մէջս»: Յինցէնտորֆ իր մօրմէն թուլատրութիւն խնդրեց Պերլին երթալու եւ հետը անձնական խօսակցութիւն մ'ունենալու: Բայց մայրը մերժեց իր որդւոյն այս խնդիրքը, քանզի նէ չէր համարձակեր խնամակալին գործերուն միջամտել:

Ուստի Յինցէնտորֆ համակերպեցաւ իր խնամակալին հրամաններուն, քանզի կը կարծէր թէ այդ էր իր զաւակական պարտականութիւնը: Վիթթէմպէրկ գնաց իր հսկիչին հետ, որ հիմա ալ իրաւունք ունէր քննութեան ենթարկելու ուսանողին նամակներն իսկ:

Ասիկա իր ընկերներէն աւելի մեծ խղճմտանքով ու յաջողութեամբ կ'ուսանէր իրաւաբանութիւնը: Կը սորվէր նաեւ պարել, մենամարտիլ եւ ձիավարել: Պարի դասի սկսելու առթիւ ան գրած էր իր օրագրութեան մէջ. «Այսօր պարելու ըսկսայ, բայց հաստատուն որոշումս է՝ զայն ոեւէ տեղ կամ ոեւէ կերպով չգործածել հապաասկէ միայն սորվիլ՝ շիտակ դիրքի մէջ պահելու մարմինս»: Կը պարէր նաեւ խնամակալին հնազանդած ըլլալու համար: Ամէն ջանք կը թափէր շուտ սորվելու եւ անկէ ետքը՝ ազատօրէն իր ժամանակը իր նախասիրած ճիւղերուն յատկացնելու համար:

Այդ ճիւղերուն զխաւորն էր Աստուածաբանութիւնը: Խնամակալը իրեն արգիլած էր այս վերջնոյն դասախօսութեանց ունկնդրել: Ուստի պակասը կը լրացնէր ընթերցումով եւ փրօֆէ-

սորներու հետ յարաբերելով: Եւ այդ կերպով յաջողեցաւ այնքան յառաջդիմութիւն ունենալ որ յետոյ իրաւունք ունէր ըսելու թէ ինք Վիթթէմպէրկի մէջ աստուածաբանական գիտութիւնը աւելի լաւ ուսած էր քան անոնք, որոնք զայն հացի համար կ'ուսանէին:

Նաեւ եկեղեցական գործերով սկսած է հետաքրքրուիլ Յինցէնտորֆ իր կանուխ հասակէն: Այդ օրերուն, ԺԸ. դարու սկիզբը, լուսեւրական աստուածաբանութիւնը երկու խումբի բաժնուած էին. — մին ուղղափառ դաւանանքին կը հետեւէր, կը կառչէր զրին ու հին, բայց թոյլ էր հոգեւոր կեանքով. ասոր կեդրոնն էր Վիթթէմպէրկի համալսարանը: Իսկ միւսը կը բաղկանար «փիւթիւթ» կոչուածներէ, որոնք մեծ արժէք կուտային զգացման ու ներքին ապրումին: Ասոնց բերդն էր Հալէի համալսարանը եւ հիմնադիրներն ու դեկավարները Շփէնբրի եւ Ֆրանքէի նման խորունկ հաւատացեալներ: Երկու բանակին միջեւ կը տիրէր մեծ հակառակութիւն. փիթիւթները կը ներկայացնէին ուղղափառները իբր հոգեւոր կեանքէ զուրկ, «Անուղղայ կուսականներ»: Իսկ վերջինները կը ծաղրէին առաջինները իբր տարտամ զգացումներու անձնատուր եւ կեղծաւոր ու սնապաշտ աղանդաւորներ:

Արդ, Յինցէնտորֆ փիթիւթներու խումբին կը պատկանէր եւ մեծ օրհնութիւն ընդունած էր Շփէնբրէն ու Ֆրանքէն. բայց Վիթթէմպէրկի մէջ ուղղափառ աստուածաբաններու հետ մտերմօրէն հաղորդակցելով եւ անոնց քարոզները լսելով գտաւ թէ անոնց մէջ ալ կը գտնուէին մարդիկ, որոնք Յիսուս Գրիստոսը կը սիրէին ամբողջ սրտով: Ուստի ջանաց միջնորդել եւ երկու ուղղութիւնները հաշտեցնել մէկ մէկու հետ. արդէն իր մանկութեան օրերէն ի վեր իր էական ձգտումներէն մին էր հաղորդակցութեան կապեր հաստատել Աստուծոյ զաւակներուն միջեւ: Քանի որ մեծ յարգանք կը վայելէր թէ՛ Հալէի եւ թէ՛ Վիթթէմպէրկի փրօֆէսորներէն, իր ուսանողութեան վերջին ձմեռը գրաւոր ու բերանացի բանակցութիւններ վարեց եւ իրեն անձին տեւէ յոգնութիւն չխնայեց հաշտութեան ճամբան շիտակելու համար:

Բայց իր մայրը, խորթ հայրը՝ զօրապետ Նեցմըր եւ մեծ մայրը արդիւնցին իր այս գործունէութիւնը՝ զայն իր տարիքին, ըմբռնումին եւ փորձառութեան սահմանէն բարձր գտնելով: Խորթ հայրը՝ այս ամենուն վրայ գրելէ յետոյ կ'աւելցնէր, «Դուք դեռ խնամակալի մը եւ հսկիչի մը ձեռքին տակն էք, անոնց առաջնորդու-

թենէն կախում ունիք... Յիշեցէք Հորրորդ պատուիրանքը» (Ելից Ի. 12):

Այս վիշտ պատճառեց Յինցէնտորֆի, բայց հնազանդեցաւ: Անիկա այն օրերուն գրած է. — «Հալէ ճամբորդելս խիստ օգտակար պիտի ըլլար, բայց Հորրորդ պատուիրանքին կատարումը պարտականութիւն է:

Այսպէս՝ կը տեսնենք թէ Յինցէնտորֆ իր երիտասարդութեան եւ ուսանողութեան շրջանին ալ մանկական սրտով կը հնազանդէր իր ծնողաց, թէեւ մեծ յարգանք կը վայելէր իր փրօֆէսորներէն եւ իր դասակարգի մարդոց մէջ շատ կարեւոր դեր մը ունէր: Այսուհանդերձ պէտք է ըսել թէ ինք ալ մարդ էր եւ ունէր ուսանող երիտասարդներու յատուկ մի քանի թերութիւններ, մասնաւորաբար պարծենկոտութիւն:

1719ին, երբ հազիւ 19 տարեկան կար, լըրացուց իր համալսարանական շրջանը եւ հրաժեշտ առաւ իր փրօֆէսորներէն, որոնք իրենց գոհունակութիւնը յայտնեցին՝ իրեն նման աշակերտ մը դաստիարակած ըլլալուն համար:

#### ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

### ԻՆՉ ԿՐՆԱՆ ԸՆԵՆ ԿՐՆՈՒԿՆԵՐ

Լսնտոնի աղքատ թաղերէն միոյն մէջ կիրակնօրեայ դպրոց մը կար: Հոն աշակերտները Սուրբ Դրքի պատմութիւններու միջոցաւ իրենց Տէր Յիսուսը սիրել սորված էին: Օր մը անոնցմէ չորս հատ ներկայացան դպրոցի տեսուչին եւ հարցուցին, «Մենք պզտիկներս ի՞նչ կրնանք ընել Փրկչին համար»: Այդ ատեն տեսուչը յիշեց զործարանի մը բանուորները: Ինքը շատ անգամ փորձած էր անոնց Աստուծոյ խօսքը քարոզել, բայց անոնք միշտ ալ զինքը նախատած ու ետ դրկած էին: Արդ, տեսուչը խորհեցաւ, «Թերեւս այս փոքր մանուկները պիտի կարենան այդ քարացած սիրտերը կակուղցնել, եթէ երթան զործարան եւ հոն գեղեցիկ երգեր երգեն»: Ուստի անիկա խրատեց պզտիկները որպէսզի կէսօրին զործարան երթան եւ ճաշի ատեն բանուորներուն մօտը կայնին ու անոնց երգեն: Անոնք ուրախութիւնով համաձայնեցան, քանզի չորսն ալ շատ կը սիրէին երգել, մանաւանդ անոնցմէ մին, 12 տարեկան տղեկ մը, որ շատ քաղցր ձայն մը ունէր եւ կրնար գեղեցիկ սոխակի մը պէս:

Յաջորդ օրը անոնք պատրաստուեցան, դա-  
ցին զործարան, կանգնեցան այն գաւթին մէջ

ուր բանուորները իրենց կէսօրուան դադարը կ'անցնէին, եւ երգեցին երգը Աստուծոյ սիրոյն մասին: Գործաւորները նախ մտիկ ըրին մեծ ուշադրութիւնով: Յայտնի էր որ անոնցմէ շատեր կ'ուրախանային: Բայց ոմանք ալ ծաղրեցին ու ըսին, «Օ՛, մենք հիմա շատ պատուաւոր մարդիկ ենք, մեր ճաշի ատեն երաժշտութիւն կը լսենք»: Կային նաեւ ուրիշներ որոնք չէին փափաքեր լսել այդ երգերը, չէին ուզեր որ ատով իրենց հանգիստը խանգարուէր:

Մանուկները գացին ուրիշ օրեր ալ: Հետգհետէ բանուորները հասկցան երգերուն իմաստը եւ նկատեցին որ պզտիկները անոնցմով մեղաւորները կը հրաւիրէին ապաշխարելու: Ատոր վրայ սկսան դժգոհիլ գործաւորները եւ հեզնական ու սպառնական խօսքեր նետել փոքրիկներուն: Բայց մեր հաւատարիմ ու սիրուն երգիչները չյուսահատեցան: Առանց վախճալու ամէն կէսօրին կուգային, կը կայնէին նոյն տեղը ու յուզիչ շեշտերով կ'երգէին իրենց գեղեցիկ երգերը:

Սակայն օր մը ամենէն չար մարդոցմէն մէկը առաւ մեծ քար մը եւ նետեց պզտիկներուն: Քարը հանդիպեցաւ ամենէն լաւ երգիչին զլիւտն, արիւնը սկսաւ հոսիլ, եւ փոքրիկը ինկաւ գետին: Ատոր վրայ բոլոր գործաւորները, մանաւանդ կիները լացով վազեցին վիրաւորին քով: Մէկը իր զգեստէն կտոր մը պատռեց՝ վէրքը կապելու համար, ուրիշ մը ջուր բերաւ, երրորդ մը գինի հրամցուց եւ չորրորդ մը վաղեց բժիշկին քով: Բայց ամէն բան անօգուտ էր: Մեռեալի մը նման տոգոյն կը պառկէր մանուկը. մարդիկը միայն կը լսէին թէ ինչպէս ան կը շշնշէր, «Տէր Յիսուս, ընդունէ իմ հոգին»: Քիչ յետոյ զաղրեցաւ ամէն շարժում. քառորդ ժամ ետքը բժիշկը եկաւ եւ քննելով հաստատեց թէ պզտիկը մեռած էր: Դատարանը շուտով հարցաքննութեան սկսաւ, բայց հակառակ ամէն ջանքի, յանցաւորը չգտնուեցաւ:

Սակայն փրկարար վախ մը մտաւ բոլոր գործաւորներուն մէջ, անոնք կը խորհէին թէ շատ ստորին եւ ամբարշիտ գործ մը կատարած էին. կրենք սպաննած էին տղայ մը, որ միայն իրենց բարիքը փնտռած էր: Բոլորին մէջ արթնութիւն մը յատու իկաւ, փշրուեցան քարացած սրտերը, բաց դուռ դուռ քարոզիչը, որ անոնց աւետարան քարոզելու եկաւ եւ շատեր սրտանց Քրիստոսի դարձան:

Ինչ որ հոս միայն փոքր չափով մը պատահեցաւ, աւելի մեծ չափով մը տեղի ունեցաւ

Պենտէկոստէին օրը: Երբ Պետրոս տաճարին մէջ խօսեցաւ Յիսուս Քրիստոսի չարչարանքներուն ու մահուան վրայ, այն ատեն բացուեցան մարդոց աչքերը, տեսան իրենց մեղքերն ու դատապարտութիւնը եւ իրենց սրտերը յանձնեցին Տէր Յիսուսի: Այն ատեն կատարուեցաւ ինչ որ Աստուած ըսած էր Իր մարգարէին միջոցաւ, «Դաւիթի տանը ու Երուսաղէմի բնակիչներուն վրայ շնորհքի ու աղօթքի հոգին պիտի թափեմ եւ անոնք Ինձի, իրենց խոցածին, պիտի նային եւ Անոր վրայ մէկ հատիկ զաւակի վրայ ողբալու պէս պիտի ողբան» Զաք. ԺԲ. 10:

Այս պատմութիւնը կը ցուցնէ մեզի դարձեալ թէ Աստուած ինչպէս կրնայ օրհնել փոքր մանկան մը աշխատանքն ու մահը, երբ ան նուիրուած է զԻնքը փառաւորելու:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՌՈՒՍԻԱ.—

Մանուկներու օտարացումը իրենց ծնողներէն:

Համայնավար ղեկավարները շատոնց ի վեր շեշտած են թէ մանուկները պետութեան կը պատկանին, որ իրաւունք ունի զանոնք բաժնելու ծնողներէն: Մինչեւ հիմա այս զաղափարը դեռ չէր գործնականացուած, սակայն այս օրերս շատ մը զիւղատնտեսական եւ ճարտարարուեստական շրջանակներու մէջ՝ պօլշեւիքները լըրջօրէն ձեռնարկած են իրենց ընտանեկան յարկէն հեռացնելու զաւակները այն ծնողներու, որոնց նկատմամբ կասկած կայ թէ հակապետական զգացում ունին: Օրիկակի համար, Ուքրաինոյ կրթական տեսուչը իրենց կուսակցութեան ժէ. համաժողովին մէջ յայտարարած է թէ հակահամայնավար ընդդիմութիւնը կոտորելու համար շուտով պիտի հեռացուին մանուկները իրենց ծնողքէն: Եւ Լէնինկրատի շրջանակին մէջ կառավարութիւնը արդէն իւրացուցած է շատ մը բարեպաշտ ընտանիքներու զաւակները:

Rédaction du « PANPÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN, 39, Rue St.-Savournin - Marseille